

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ  
ПАМЯТНИКИ  
АРМЕНИИ

2

ПАМЯТНИКИ  
ЭПОХИ БРОНЗЫ

ВЫПУСК  
II

А. А. МАРТИРОСЯН

ПОСЕЛЕНИЯ  
И МОГИЛЬНИКИ  
ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1969

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԱՂԵՍԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ Ա Յ Ի Լ Ե Ն Ի  
Հ Ն Ի Կ Ի Տ Ի Կ Ի  
Հ ՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ  
2

A III / 3599  
- 3600 - 2

ԲՐՈՒՉԵՒԼՅՈՒՆ  
ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Պ Ր Ա Կ

II

902.6 (47.925) Հ.Ա. ԱՄԱՐՏԻՐՈԱՅԱՆ  
ՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ  
ԲՆ Ի Կ Ի Կ Ի Կ Ի  
ԵՎ ԴԻՄԻՏՐՈՒՆ Ի Կ Ի Կ Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1969

Խմբագրական կոլեկիա

Ր. Ն. ԱՌԱՔԵՆՅԱՆ, Ս. Դ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ,  
Կ. Դ. ՂԱՅԱԴԱՐՅԱՆ, Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
Գ. Ա. ՏԻՐԱՅՅԱՆ

Պրակի խմբագիր  
Ր. Ն. ԱՌԱՔԵՆՅԱՆ

THE ARCHEOLOGICAL MONUMENTS  
AND SPECIMENS OF ARMENIA

2

MONUMENTS AND SPECIMENS  
OF THE BRONZE AGE

II

SETTLEMENTS AND SEPULCHRES  
OF THE LATE BRONZE AGE

BY A. A. MARTIROSSIAN  
Y E R E V A N 1 9 6 9

## Ն Ե Ր Ա Ն Ի Թ Յ Ո Ւ Ն

Վերջին հարյուր տարվա ընթացքում Հայկական լեռնաշխարհի տարբեր մարզերում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվեցին՝ նախնադարյան համայնական հասարակության ժամանակաշրջանի հազարավոր հնագիտական հուշարձաններ՝ բնակատեղիներ, դամբարանադաշտեր, նյութական մշակույթի այլևայլ արգասիքներ, որոնք պատմագիտական գրավոր հիշատակարանների բացակայության պայմաններում, մեր երկրի հնագույն մշակույթի ու պատմության, կենցաղի ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման եզակի սկզբնաղբյուրներ են:

Այս հուշարձանների մեջ իրենց զգալի ֆանակով, բազմազանությամբ ու հարստությամբ առանձնահատուկ տեղ են գրավում մ.թ.ա. II հազարամյակի վերջին երրորդի կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանի (XIII—X դդ.) հնավայրերը, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ուրվագծելու նախնադարյան համայնական կարգերի անկման շրջանի պատմական համապատկերը, ինչպես նաև բացահայտելու ուրարտական ու վաղ հայկական մշակույթի բուն արմատներն ու ակունքները:

Հայաստանում ուշ բրոնզեդարյան մշակույթի անկայությունը փաստարկող առաջին տվյալները վերաբերում են XIX դարի երկրորդ կեսին, երբ, մեկը մյուսի ետևից հայտնի դարձան և մասամբ ուսումնասիրվեցին «Ռեդկին լագերի» (1851, 1878, 1928 և այլն), Ոռնակի (1871, 1893—1894), Ալեքսանդրապոլի (1874), Լեռնային Ղարաբաղի (1894—1899), Թազաֆենդի (1894—1895, 1904), Սևանի ավազանի (1906—1908) և այլ վայրերի ինքնատիպ ու «Բարբարոսաբար շֆեդ» դամբարանապաշտերը: Սրանք իրենց վրա բևեռեցին ժամա-

նակի առաջնորդ գիտական շրջանների ուշադրությունը: Հայաստանի հնությունների ուսումնասիրման գործին ձեռնամուխ եղան ոչ միայն տեղի սիրող հնագետներն (Ա. Երիցյան, Ե. Կալայան, Ս. Տակայշվիլի, Ե. Ռեսլեր, Պ. Ջարկովսկի, Գ. Ջախարյանց, Բ. Խալաթյանց և այլք) ու ռուսակուս հնագիտական ընկերության անդամները (Ա. Լվանովսկի, Մ. Նիկոլսկի, Ուվարովներ, Ֆիլիմոնով), այլև մի խումբ շատ անվանի եվրոպական գիտնականներ՝ Ռ. Վիրխովը, Է. Շանտորը, Ժ. դը Մորգանը և շատ ուրիշներ:

Հանդես եկան հնագիտական առաջին հրատարակությունները, պատմագիտական հույժ նախնական դրույթներն ու հիպոթեզները:

Սովետական կարգերի հաստատումից հետո, սոցիալիստական շինարարության ծավալման ու երկրի կուլտուր-գիտական մակարդակի աննախադեպ վերելքի պայմաններում, հնագիտական-հետախուզական և սիստեմատիկ աշխատանքներին հաղորդվեց նոր թափ, նոր որակ: 1920 թվականից հետո հանդես եկած գիտավարչական և գիտահետազոտական հաստատությունները (Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտե, Հայաստանի պետական պատմական թանգարան, ՀՍԽՀ գրականության և պատմության ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ) նախաձեռնելով Հայաստանի պատմահնագիտական հուշարձանների համակողմանի ուսումնասիրության գործը հաշվառման ենթարկեցին նաև ուշ բրոնզի դարաշրջանի հարյուրավոր մեծ ու փոքր հնավայրեր: 1924—1964 թվականների ընթացքում ավերումից փրկվեցին ու մասամբ ուսումնասիրվեցին Փսիֆակի (1924), Թափայի (1931), Լենինականի (1934, 1939, 1952), Ալա-

վերդու (1933), Կիրովականի (1935, 1939, 1955), Հաղթատի (1936), Սանահինի (1946), Գուլվինոյի (1929, 1950), Դիլիջանի (1962), Ղաչաղանի (1951), Մակարաշենի, Խնձորուտի (1955), Ախթալայի (1957), Խաչատրականի (1957), Տուրսի (1956), Դավիթ-բեկի, Քաչարանի, Լծենի (1959—1960), Հացառատի (1961), Գեղարուտի (1957), Երևանի (հիպոդրոմ 1963), Հոկտեմբերյանի (Նոր և Հին Արմավիրենու շրջան), Տաուշ-Շամշագինի, Վարդաբուրի (1960), Մեծամորի (1962, 1965), Էլարի (1923, 1957) և այլ վայրերի ու բրոնզեդարյան դամբարանները, դամբարանադաշտերը, կիկլոպյան ամրոցները: Պատահական գյուտերի միջոցով Հայաստանի պետական պատմական թանգարանի ֆոնդերը հարստացվեցին նշված շրջանի բազմաթիվ հետաքրքիր իրերով ու առարկաներով:

Մասնակի ուսումնասիրության ենթարկվեցին Լենինականի, Կարմիր-բուրի, Մեծամորի, Կամո Բաղաբի, Լնաշենի բնակատեղիները, սկսվեցին և շարունակվում են Լնաշենի (1955 թ., արշավախմբի ղեկավար Հ. Հ. Մեսցակյան), և Արթիկ-տուֆի (1960 թվականից, արշավախմբի ղեկավար Տ. Խաչատրյան) նշանավոր դամբարանադաշտերի սիստեմատիկ պեղումները, որոնց նշանակությունը Կովկասի և մերձավոր արևելքի նախնադարյան ու վաղ պետական մշակույթի պրոբլեմատիկայի ասպարեզում հազիվ թե հնարավոր լինի թերագնահատել:

Վերջին տասնամյակներին, արևմտյան Հայաստանի տերիտորիայում՝ Կարս—Կարին—Օրդու գծի ուղղությամբ նույնպես հայտնի դարձան ու բրոնզեդարյան և ուրարտական մի քանի հուշարձաններ, որոնք աներկբայորեն հաստատեցին, որ

մ.թ.ա. II հազարամյակի վերջերին էլ Հայկական բարձրավանդակն ամբողջությամբ ընդգրկվում էր պատմա-մշակութային զարգացման միասնական մի հսկա օջախի մեջ, ինչպես այդ դիտվում էր մեր մշակույթի պատմության բոլոր փուլերի ուսումնասիրության ընթացքում:

Այսուհանդերձ, մեր երկրի ողբերգական մասնատվածությունը մեծապես խոչընդոտում է ոչ միայն տեղական մշակույթի համակողմանի ուսումնասիրությանը, այլև կովկասյան ու հարավ-ուսական կուլտուրաների գեներալի պարզաբանման գործին:

Վերը հիշատակված հնավայրերի և նյութական արտադրության արգասիքների հրատարակմանն ու ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ<sup>1</sup>, որոնք նշանակալից չափով առաջ են մղում մեր հին մշակույթի մնացորդների դասակարգման, ու թվագրման, ինչպես և տոհմացեղային կարգերի ներքին օրինաչափությունների ուսումնասիրման հարցերը: Հարցեր, որոնք դրսևավորվում էին նյութական մշակույթի տեղաշարժելի, պատմա-կուլտուրական աղետների ու փոխհարաբերությունների մեջ:

Այս հանգամանքները հնարավոր անհրաժեշտություն են դարձնում Հայաստանի հնագիտական հուշարձանների ստրաս-կորպուսի մեջ անգրադառնալու նաև ու բրոնզեդարյան հուշարձանների ընդհանրացված հրատարակմանը, որին ձեռնամուխ է եղել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը սույն նախնական պրակով:

<sup>1</sup> Տե՛ս ու բրոնզի դարաշրջանին վերաբերող աշխատությունների ցանկը:

## ՈՒՇ ԲՐՈՆՁԵԳԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁՍՆԵՐ

### I. ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐ ԵՎ ԿԱՑԱՐԱՆՆԵՐ

Ուշ բրոնզի դարաշրջանում Հայաստանի ամբողջ տեղիտորիան ծածկված էր բնակատեղիների խիտ ցանցով, որոնք ներկայացնում էին ցիկլոպյան ամրապարիսպ բերդերին կից բնակելի ու տնտեսական կառույցների կոմպլեքսներ՝ հին դամբարանադաշտերի զգալի տարածություններով: Միայն Գավառագետի հովտում, ներկայիս Կամո քաղաքի շրջակայքում ուշ բրոնզեդարյան 22 բնակատեղի է նշվում: Սևանի ավազանում այգպիսիների թիվը հասնում է հարյուրի: Տասնյակ-հարյուրավոր հին բնակավայրեր են հայտնաբերված Արարատի և Արաղածի փեշերին, Զավախքի, Թոեղքի, Արցախի, Շիրակի, Տաշիր-ձորագետի, Վասպուրականի և շատ ու շատ այլ վայրերում:

Ցավոք, նշված բազմաթիվ ու բազմատեսակ հուշարձաններից առայժմ մասնակի ուսումնասիրության են ենթարկված միայն մի քանիսը, այն էլ Սովետական Հայաստանի և Անգրկովկասի շրջանակների մեջ:

Առաջատյան բնակատեղիներ: Ուշ բրոնզեդարյան բնակատեղիների ուսումնասիրության սուղին փորձը կատարվեց 1896 թվականին, երբ ռուս նշանավոր հնագետ Ա. Ա. Իվանովսկին, Ուրարտական Մենուախինիլի քաղաքի ուսումնասիրության առիթով հնագիտական պեղումներ ծավալեց Արարատի հյուսիսային լանջին: Այժմյան Թաշիրում գյուղի սահմաններում, նրանից արևելք ու հարավ-արևելք, նա ուսումնասիրեց էրիկուախի ցեղին պատկանող 3 խոշոր բնակատեղիներ՝ քարե շինությունների ու ցիկլոպյան անառիկ բերդերի մի քանի կոմպլեքսներով, որոնք ուսումնասիրողի կարծիքով ամենաերևելիներն են

ողջ Կովկասի շահանիշով: Բնակելի, տնտեսական կառույցների, ցիկլոպյան ամրոցների հրատարակված հատակագծերն ու հնագիտական սակավաթիվ իրերը ցույց են տալիս, որ ուսումնասիրվող հուշարձանները պատկանել են մ.թ.ա. XI—IX դարերին: Սրանցից մեկի հիման վրա, մ.թ.ա. IX դարի վերջին տասնամյակին կառուցվել է ուրարտական Մենուախինիլի քաղաքը, ուրարտական ռադմա-ստրատեգիական նշանավոր ավանպոստը Արաքսի աջ ափին: Այս բնակատեղիների սյեղումների արդյունքները, ցավոք, մանրամասն ուսումնասիրված ու հրատարակված չեն:

Արախի ձախակողմյան հուշարձանների մեջ առանձնապես աչքի է ընկնում Մեծամորի (Սև բլրի) բնակատեղին, որը քաջ հայտնի էր հնադեպերի բոլոր սերունդներին, մասնավորապես Գ. Տեր-Մովսիսյանի, Ե. Ա. Բայբուրթյանի, Հ. Ա. Մարտիրոսյանի, Լ. Ա. Բարսեղյանի, Հ. Ու. Իսրայելյանի, Ժ. Գ. Խաչատրյանի հետազոտական աշխատանքների շնորհիվ: Սակայն մեծ ծավալի պեղումներ սկսվեցին այստեղ միայն 1965 թվականին ՀՍՍՀ ԳԱ հնագիտական-երկրաբանական կոմպլեքս արշավախմբի կողմից (ղեկավարներ Կ. Հ. Մկրտչյան, է. Վ. Խանզադյան): Հին Հայաստանի այս կարևոր հուշարձաններից մեկը ընկած է Մեծամոր գետի ձախ ափին՝ Այդր լճի հարավակողմում, էջմիածնի շրջանի Վերին Զեյվա գյուղի երկսայատ հրաբխային բլրի վրա ու նրա ստորոտներին: Այն շրջապատի տափարակի վրա իշխող գիրք ունի, գրավում է մոտ 4 հեկտար տարածություն: Իր գեղատեսիլ արտաքինով, պարզ կապուտակ լճակով, սառնորակ աղբյուրներով, ծառախիտ պուրակով Մեծամորն իրեն էր ձգում բրոնզեդարյան մարդուն՝ կենսական ու արտադրական գործունեության հիասքանչ հնարավորու-



թյուններով: Չարմանալի չէ, որ 1965 թվականին բլրի հյուսիսային մասում գցված շերտադրական հսկա խրամատի տարրեր հորիզոններում բացվեցին շինությունների ու արտադրական տեղամասերի հզոր մնացորդներ, որոնք հիմնադրվել են մ.թ.ա. III հազարամյակում և աստիճանական փոփոխություններով ու զարգացմամբ գոյատևել մինչև մ.թ.ա. VIII դարի I կեսը՝ նշանավոր Արգիլիշտիխի հիմնադրման ժամանակաշրջանը:

Բլրի տափարակ գագաթին ու ստորոտներին դիտվում են ցիկլոպյան ամրապարիսպ շինվածքներ, քարակոփ բարեձև տների մնացորդներ, ինչպես և քարայրային արհեստական մեծ կացարաններ, որոնք օգտագործվել են հազարամյակների ընթացքում՝ նախնադարից մինչև միջնադար: Այսպիսի նախնադարյան կացարաններ կային պատմական Արմավրի բլրի վրա, Շիրակում, Ջանդեղուրում, Սևանի ավազանում և այլուր, որոնք, ի դեպ, օգտագործվում էին ըստ ամենայնի, նույնիսկ ուշ միջնադարյան ժամանակներում: Կենցաղային այս հուշարձանների գերագույն մասը պատկանում է ուշ բրոնզի և վաղ ուրարտական թագավորության ժամանակաշրջանին (մ.թ.ա. XIII—VIII դդ.): Հենց այս փուլին են վերաբերում Մեծամորի արտադրական հսկա կոմպլեքսները՝ հանքանյութի հարստացման սիստեմները մեծ ու փոքր առվակներով, հսկա ժայռափոր տաշտակներով ու ռեզերվուարներով, մետաղ և այլ նյութեր հալելու բազմաթիվ մեծ ու փոքր հնոց-ձուլարաններով, որոնք այս բնակավայրը դարձնում են առաջնակարգ հետաքրքրության վայր՝ երկրի արտադրողական ուժերի մակարդակն ուսումնասիրելու տեսակետից: Բնակատեղիի ժայռոտ մակերեսը շինություններից ազատ մասերում ծածկված է բազմաթիվ երկրաչափական ու կենդանական ժայռապատկերներով, որոնք իրենցից ներկայացնում են պաշտամունքային ուշագրավ, շատ կողմերով առայժմ անմեկնաբանելի մի կոթող: Բարձունքի կողային քարայրներից մեկում այժմ էլ բխող սառնորակ աղբյուրը և հյուսիսային կողմում տարածվող ստորերկրյա աղբյուրներից սնվող հիասքանչ լճակը, հին-բնակավայր-սրբատեղիի հիմնական էլեմենտներն էին կազմում: Բնակավայրի հյուսիսային կողմում տարածվում է ուշ բրոնզեդարյան և վաղ ուրարտական շրջանի դամբարանադաշտն իր քարարկղային ընդ-

րոշ թաղումներով, հնագիտական ուշագրավ իրերով, որոնք գրեթե ամբողջությամբ համապատասխանում են Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրի նյութերին: Ի դեպ, 1965 թվականի աշնանը այստեղ պեղվեց վաղ ուրարտական ամենատիպական դամբարաններից մեկը:





Չափազանց ուշագրավ մի բնակատեղի էլ հայտնաբերված է Հայկական ՍՍՀ Բասարգեշարի շրջանի Ձողի լեռնանցքի վրա, որտեղ երկրաբանները վերստին հայտնաբերել են նախնազարում ու միջնադարում տասնյակ հարյուրամյակներ շահագործվող ոսկու հանքերը: Ձողի բնակատեղին նույնպես հիմնադրվել է մ. թ. ա. III հազարամյակում ու գոյատևել մինչև Ջաքարյանների շրջանը, այն նման է Մեծամորին արտադրական իր հսկա կոմպլեքսներով, հանքաքարի մանրացման, համաձուլման, մշակման ամենաբազմազան հարմարանքներով, արհեստագործության հուժեղուհետքերով, հին հանքահորերի զանազան տարատեսակների, բնակելի թաղամասերի, հսկա դամբարանադաշտերի առկայությամբ: Ցավոք, նախնադարյան նյութական արտադրության այս նշանավոր հուշարձանը մանրազնին ուսումնասիրության չի ենթարկված:


Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղին, որ նույնպես բրոնզեդարյան Հայաստանի կարևորագույն հուշարձաններից է, հայտնաբերվել և ուսումնասիրվել է 1954—1962 թվականների ընթացքում Չ. Ա. Մարտիրոսյանի և Վ. Ս. Սորոկինի կողմից: Բրոնզեդարյան այս ընդարձակ հուշարձանն ընկած էր ուրարտական Թեյշեբախի քաղաքի փլատակների տակ, Հրաղդանի ձախ ափի դարավանդի գետային նստվածքների վրա, Երևանի սահմանագծի մեջ. գրավում էր 40—50 հեկտար տարածություն և, բոլոր բնակավայրերի նման, բաղկացած էր շինությունների կոմպլեքսներից, դամբարանադաշտից ու ցիկլոպյան մեծ ամրոցից, որը հիմնահատակ կործանվել կամ վերափոխվել էր Թեյշեբա աստծո քաղաքի միջնաբերդի շինության միջոցին: Բնակատեղին հիմնադրվել է մ.թ.ա. XII դարում, գոյատևել ուշ բրոնզի և երկաթի լայն տարածման ժամանակներում և կործանվել է, ըստ երևույթին, ուրարտական Արգիշտի 1-ին թագավորի արշավանքների ժամանակ՝ VIII դարի I քառորդում, թեև դրանից հետո էլ կյանքն այստեղ վերջնականապես չի դադարում (նկ. 1—3):



24-1







14. 3

Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրի շինություններն առանձնապես մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկված կենտրոնական տեղամասում: Դրանք նախնադարյան տների երկու հսկա կոմպլեքսներ են, բաղկացած իրար կից կացարանների ու տնտեսական կառույցների միակտուր հատվածներից: Սրանց մեջ մտնող յուրաքանչյուր բնակարան կազմված էր կլոր կամ բազմակյուն կացարանից, որի տարբեր կողմերից քառակյունի սենյակներ էին կցաշինված: Կառույցները վերագետնային են՝ քարե հիմքի վրա կավածեփ վերնապատերով ու հատակով, երդիքավոր ու հարթ տանիքներով: Սրանք հայկական ճարտարապետության ամենավաղ նախատիպերն են: Առանձնապես բնորոշ ու տիպական պատկեր են ներկայացնում կլոր կացարանները, որոնց համար պարտադիր են սրբազան ու կենցաղային օջախները, հացահատիկի հորերը, ինչպես և պտղաբերության ղաղսփարը հատկանշող կանացի քարակոփ կուռքերը: Այս կացարանները ներքուստ գրեթե բոլորովին կլոր են, ունեն կավածեփ մահիճներ ու նստարաններ, իսկ դրսի կողմից՝ քառակյունաձև գծագրություն: Սրանք Արարատյան դաշտին բնորոշ բնակարաններ են, որոնց նախատիպերը հանգես են եկել տակավին մ.թ.ա. IV—III հազարամյակներում:


Կարմիր բլուրի նախաուրարտական շինությունների հատակագծային առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բրոնզի դարաշրջանի բնակարանը բաղկացած է եղել փոքր ընտանիքների պատկանող շինությունների մի քանի մեկուսացված խմբերից, որոնցից և կազմվել է նահապետական մեծ ընտանեկան համայնքը՝ գերդաստանը՝ մ.թ.ա. II հազարամյակի բնորոշ տնտեսական-հասարակական միավորը: Շինարարական այս կոմպլեքսների բազմամասնությունը ու բազմօջախությունը, ինչպես և շինություններն իրար կապող բազմաթիվ մուտքերի առկայությունը աներկբայորեն մատնանշում են, որ բնակարանային ներկայացված տիպի մեջ համադրվում են նահապետական գերդաստանի տոհմական կենցաղի ու փոքր ընտանիքների առանձին բնակեցման սկզբունքները: Բնակավայրի հարավարևելյան մասում կատարված շերտագրական խորը կտրվածքը ցույց է տալիս, որ այստեղ կյանքը հարատևել է մոտավորապես 4 հարյուրամյակ՝ նախաուրարտական կառույցների իրար

վրա նստած 4 շերտերով և որոշակի հնագիտական բնութագրով: Ամենաստորին շերտում բացվել են մետաղագործական արհեստանոցի փլատակներ, գործիքների, ձուլման թասերի ու կաղապարների կոմպլեքսով, մետաղագործական հնոցի մոխրի ու փայտածխի թանձր շերտի մնացորդներով: Հետագա ուսումնասիրությունները ցույց տվին, որ մետաղագործական արհեստանոցի այս տիպը տարածված էր ողջ Կովկասում և Առաջավոր Ասիայում մ.թ.ա. II հազարամյակի վերջերին և I հազարամյակի սկզբներին: Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեր նյութերի եզրիտական զուգահեռները կիրառական արվեստի հուշարձաններից: Կարմիր բլրի մետաղաձուլական արհեստանոցում հայտնաբերված նյութերի մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երկաթե սկավառակաձև պատրաստուքները, որոնք հաստատում են երկաթագործության առկայությունը Հայաստանում ուշ բրոնզեդարյան մշակույթի վաղ փուլերից սկսած (մ.թ.ա. XII դար):


Կարմիր բլուրի նախաուրարտական դամբարանների մի մասը հայտնաբերվել է կենտրոնական և ծայր արևմտյան շինությունների հատակների տակ, իսկ ավելի մեծ հատվածը՝ բնակատեղիի սահմաններից դուրս, նրա հարավարևելյան մասում: Այս հանգամանքն էլ իր հերթին վկայում է, որ մ.թ.ա. XIII դ. վերջերին այս փոքրիկ բնակատեղին հետզհետե ընդլայնվելով, ուրարտական էքսպանսիայի նախօրեին դարձել էր բավականաչափ հարուստ ու ընդարձակ բնակավայր՝ տնտեսության բազմապիսի ճյուղերով: Հայտնաբերված են հացաբույսերի և կենդանիների մնացորդներ, քարից, մետաղից, կավից և այլ նյութերից պատրաստված բազմաթիվ հետաքրքրական իրեր ու առարկաներ:

Լեռնեականի բնակատեղին: Մ.թ.ա. VIII դարի սեպագիր արձանագրությունների մեջ նշվում են «Շիրախի երկրի» (Շիրակի դաշտավայր) ուշ բրոնզեդարյան և ուրարտական ժամանակաշրջանի մի քանի հարուստ բնակատեղիներ, որոնցից մեկը հայտնաբերվել ու մասամբ ուսումնասիրվել է Լեռնեականի մսի կոմբինատի շինարարության վայրում՝ 1934 թվականին, Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի արշավախմբի կողմից (ղեկավար Աշխ. Քալանթար) և լրացուցիչ ուսումնասիրության է ենթարկվել 1952

каменное разрушенное жилище  
Разрез по А-А



П л а н



Размеры в см. ок  
Масштаб = 1:25

թվականին ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի էրթուղային ջոկատի (ղեկավար Հ. Ա. Մարտիրոսյան) հետախուզական աշխատանքների միջոցին: Բնակատեղին ընկած է Շիրակից դեպի Վանանդի ու Արարատյան դաշտերը տանող ճանապարհների հանգուցակետում և տեղադրված մի քանի աննշան բարձունքների վրա՝ XI—VIII դարերի մի քանի հարյուր դամբարանների հարևանությամբ: Հնավայրի գրաված ընդհանուր տարածությունը, ամրոցի առկայությունը, բնակավայրը շրջապատող պարսպապատը, ոռոգելի ցանքատարածությունները և այլ մանրամասները պարզված չեն: Զի կատարված նաև տեղագրական հանույթ: 1934 թ. աշխատանքներին վերաբերող կարճառոտ հաղորդման մեջ նշվում է միայն, որ կենդանական բնակատեղին կազմված է քարակերտ, քառանկյունի կամ կիսագետնափոր, հիմնահողային կացարաններից, քարաըկղային ու գետնահողային թաղումներից: Վերահիշյալ շինություններից մեկը հայտնի է զանգվածեղ մարտական սակրի պղնձաձուլական կաղապարի գյուտով և ուսումնասիրողների կողմից իրավամբ համարվում է բրոնզեդարյան մետաղագործի արհեստանոց:

1952 թվականի աշխատանքների ժամանակ բնակավայրի արևմտյան հատվածի ծայր արևելյան բլրի վրա հայտնաբերվեցին մի քանի քարե շինությունների մնացորդներ, որոնցից մեկի պահպանված պատերի բարձրությունը հասնում էր 2, 10 մ. (նկ. № 4): Սրանք շինված էին բրոնզեդարյան կիկլոպյան տիպի շոր շարվածքով, բազալտի ու տուֆի կոպիտ մշակված բեկորներից: Հատակները կավածեփի էին, ողորկ՝ մոխրի ու այրված գերանների թանձր շերտի մեջ՝ խեցեղենի, աղորիքների, երկաթե իրերի մնացորդներով: Արևելյան բլրի շարունակության վրա պեղվեցին բազմաթիվ քարաըկղյա դամբարաններ:


Մերձսևանյան բնակատեղիներ: Կամո քաղաքի արևելքում գտնվում է Կամո (նախկին Նոր Բայազետ) քաղաքի կենտրոնում և հայտնի է նշանավոր «բերդի գլուխ» ամրոցով, որը տեղադրված է քաղաքի արևմտյան մասում բարձրացող 40—50 մետրանոց հրվանդանի վրա և զբաղեցնում է գագաթի 5 հեկտար տարածությունը (նկ. 5):

Ամրոցն ունեցել է աշտարակազարդ հզոր պարիսպներ (4 մետր լայնությամբ), բարեկարգ, խիստ ամրացված միջնաբերդ՝ հարավ-արևմտյան

մասի կացարաններով, միջնաբերդից դուրս, բնակելի տների կոմպլեքսներ, բնակության համար հարմարեցված մեծ ու փոքր բնական այրեր, հսկա ժայռաբեկորներից շինված ստորերկրյա գետնուղի, որը տանում էր դեպի Գավառագետը, ինչպես և բնորոշ բրոնզեդարյան բնակատեղի: Ամրոցի հարավ-արևելյան անկյան ուղղությամբ այժմ էլ պահպանվել են սալածածկ ութ թռիչքանոց կամուրջի հետքեր, իսկ նրա հարավային լանջին՝ բնակատեղիի կացարանների փլատակներ:

Այս բնակատեղին ու ամրոցը, ինչպես պարզվեց վերջերս Գ. Հ. Միքայելյանի հետախուզական աշխատանքներից, գոյություն է ունեցել ուշ բրոնզեդարյան շրջանից մինչև մ. թ. ա. I դարը և հին մշակույթի շինարարական հորիզոններն այնպես են միահյուսված ու խառնված, որ առայժմ հնարավոր չէ հստակորեն զանազանել տարբեր շրջաններին պատկանող կառույցների ու կուլտուրական շերտերի կոմպլեքսները: Հասկանալի է, որ բնակատեղին և ամրոցը պետք է նշանակալից չափով բարեկարգված ու ամրացված լինեին մ.թ.ա. VIII դարի վերջերին, երբ ուրարտական Ռուսա I-ին թագավորը ղավթեց Վելիքուխի երկիրը և բնակատեղին վերակառուցելով ու վերանվանելով «խալդի աստծո քաղաք», այն դարձրեց թագավորության փոխարքայության կենտրոն: Պատահական չէ, որ ուսումնասիրողներից ոմանք (Պիտտրովսկի, Գյուղալյան, Շլեկ, Միքայելյան) պնդում են, որ «Բերդի գլուխ» նշանավոր ամրոցի մատուցները և ջրային ռեսուրսները պահպանող մի քանի մեծ ու փոքր ավանպոստեր էին հանդիսանում «ժամի դարի», «ջաղացի դարի», «Մըռթբի ձորի» և այլ բերդեր: Պատահական չէ նաև Սմբատյանցի, Լալայանցի, Մեղանինովի, Ավդալբեգյանի, Բարխուդարյանի, Պիտտրովսկու, Գյուղալյանի, Միքայելյանի և շատ ուրիշ հնագետների հետաքրքրությունը նշանավոր կոթողի նկատմամբ:

Լեսայեի բնակատեղին (նկ. 6—7): Գյուղի հարավային ծայրամասի քարքարոտ բարձունքների վրա է գտնվում Լճաշենի նշանավոր կիկլոպյան ամրոցն ու նրան շրջապատող բնակատեղին: Այն գրավում է ավելի քան 55 հեկտար տարածություն, փրկված է 15 բլուրների, նրանց լանջերի ու ձորակների վրա: Ամրոցն իր դիրքով 50—100 մետր բարձունքի ու իշխում է շրջակայքի վրա: Հնավայրի արտաքին պաշտպանական պարսպապատերի ընդհանուր երկարությունը հասնում է շուրջ 5000 մետրի, լայնությունը 3,5—5 մետրի: Լճաշենի ամրոցն ունի



երկու միջնաբերդ, բարձր բլուրների վրա տեղադրված, տարրեր մեծութան, 22 հզոր քարաբուրգեր ու աշտարակներ: Ամրոցի ու միջնաբերդի տարածությունները ծածկված են բազմաթիվ կացարանների ավերակներով: Ամրոցից դուրս, հարավային, հարավ-արևելյան և հարավ-արևմտյան հատվածներում նույնպես քարակերտ խոշոր շինությունների ավերակներ կան: Ամրոցի երկու միջնաբերդերն իրար հետ կապված են բնական կիրճերի անխոցելի ճանապարհներով՝ 200 մ ընդհանուր երկարությամբ: Լճաշենի ամրոց-բնակատեղի, անկասկած, հանդիսացել է մի անխորտակելի պատվար Սևանի հյուսիս-արևմտյան վերջավորության վրա և ապահովել Ուղուրի-էտիոնյան ցեղային հզոր միության անվտանգությունը հյուսիսից: Առաջին միջնաբերդը տեղադրված է ամրոցի արևելյան մասում՝ մեկ հեկտար տարածության վրա, ունի հռաշար պարսպապատ 4 մուտք, մոտավորապես 70 քառակյունի կամ բուլորատիպ կացարան, բրոնզեդարյան ու միջնադարյան բնորոշ շերտերով, որոնք վերագրվում են մ. թ. ա. III հազարամյակից մինչև մ. թ. XIII դ. ընդգրկող ժամանակաշրջանին: Այս շերտերի մեջ իրենց զգալի հարստությամբ ու հզորությամբ աչքի են ընկնում ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի շերտերը: Հենց այդ շերտերից մեկումն էլ, առաջին միջնաբերդի արևմտյան պարսպապատի 11-րդ կացարանի նախավերջին հորիզոնում հայտնաբերվեցին երկու գետնափոր մետաղաձուլական հնոցներ և պղնձագործական մեծ կաղապար՝ մոխրի ու փայտածխի թանձր շեղջի մեջ:

Լճաշենի բնակավայրի բաղկացուցիչ մասերի, նրանց ժամանակագրական փոխհարաբերությունների և շերտագրության հարցերն առայժմ հստակորեն չեն լուծված: Սրա բնակելի թաղամասերում շատ կան երեք-չորս սենյականոց բնակարաններ՝ օջախներով, բուխարիկներով, կենտրոնական սյունաշարերով, որոնք գիտվում են իբրև ընտանեկան մեծ համայնքների՝ նահապետական գերդաստանների կացարաններ:

Լճաշենի երկրորդ միջնաբերդը գտնվում է ամրոցի հյուսիս-արևմտյան ծայրամասում, առաջինից 300 մետր հեռու ընկած գոգավոր բլրի վրա, որը բարձրանում է Սևան-Կամո ճանապարհի եզրին: Այն նույնպես գրավում է 1 հեկտար տարածություն, առաջինի նման կրկնաուղարիսպ ունի, երկու մուտք և սրանց աջ ու ձախ կողմերում՝ աշ-

տարակների հետքեր: Միջնաբերդի շարունակության վրա, բարձունքների գագաթներին ու լանջերին բազմաթիվ բնակարանների հետքեր կան:

Կացարանների մի առանձին, հսկա խումբ էլ բացվել է գյուղի արևելյան՝ ջրից ազատված հատվածում, ուր գտնվում է ուրարտական նշանավոր տիրակալ Արգիշտի 1-ին թաղավորի սեպագիր արձանագրությունը՝ Կիխունի երկիրը (այժմ Հրազդանի շրջան) նվաճելու մասին: Ի դեպ, այստեղ Արգիշտին հաղորդում է նաև, որ ինքը հասավ մինչև Իշտիկունի քաղաքի՝ այսինքն Լճաշենի մեծ բնակավայրի, սահմանագիծը:

Հավանաբար Արգիշտին այստեղ էլ կանգ է առել, որովհետև նրան դիմագրավում էին Սևանի ավազանի ամենահզոր ցեղերը: Լճաշենից հյուսիս ու հարավ կան մի քանի փոքրիկ ամրություններ, որոնք պաշտպանում են երբեմնի հզոր իշտիկունյան ամրոցի մատուցները:


Այս նշանավոր հնավայրի պեղումները կատարվում են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից (ղեկավար Չ. Չ. Մնացականյան):

Մնում է միայն ավելացնել, որ Լճաշենի ամրոց-բնակատեղին ունի նաև հսկայածավալ դամբարանադաշտեր, 2000 տարվա (մ.թ.ա. III—I հազարամյակներ), բազմատիպ թաղումների խմբերով, որոնց հարստությունը համեմատության եզրեր չի գտնում կովկասյան և ոչ մի հուշարձանի հետ:








## II. ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՆԵՐ, ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ









Հայաստանի ուշ բրոնզեդարյան մշակույթի ժամանակներին հատուկ են դամբարանների մի քանի հիմնական տիպեր, որոնց մեջ հանդիպում են միայնակ, զույգային, կամ խմբական թաղումներ՝ կողքի վրա պառկեցրած, ձեռքերն ու ոտքերը կծկած դիրքում: Դամբարանում կենտրոնական դիրք էր հատկացվում ննջեցյալներից ավագին կամ գլխավորին: Սրանց մեջ զետեղվում էին հանդերձյալ կյանքի համար անհրաժեշտ ամենատարբեր տիպի իրեր ու առարկաներ, բազմաթիվ արհեստների արգասիքներ, որոնք մեզ են հասցնում ուշ բրոնզեդարյան նյութական արտադրության յուրովի գեղեցիկ ու անկրկնելի պատկերը, անհերքելի տվյալներ ընձեռնում ժամանակի ար-

ԼՃԱՇԵՆԻ ԿԻԿԼՈՂՅԱՆ ԱՄՈՈՅԻ  
ԱՓՈՂՉԱՓԱԿԱՆ ԿԱՆՈՒՅԹԸ



Գ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր


-  ԱՄՈՂՉԱՓԱԿԱՆ ԳՈՐԾ
-  ԲՆԱԿԱՆՔ
-  ԳՈՐԾԱԾ ԲՆԱԿՈՐԱՆ
-  ԿԱՆՈՒՅԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄԻ ԲՆԱԿՈՐԱՆ 2-ՏԱՅԻ ԽՈՐՀՈՐԾԱՆ և ՎՈՏԻ
-  ԿԱՆՈՒՅԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄԻ ԲՆԱԿՈՐԱՆ ԱՆԼՐԱ 2-ՏԱՅԻ ԽՈՐՀՈՐԾԱՆ
-  ԽՈՐՀՈՐԾԱՆ
-  ԺԱՆՈՒՄԱՐԻՆԻ ԿՈՏԱՍՏԱՆՈՐ

-  ԹՈՐ ԱՆՇԱԿԻ և ՊՈՐՏԻ ԿՈՏԱՆՈՐ
-  ԱՄՈՂՉԱՓԱԿԱՆ ԿԱՆՈՒՅԹԻ ԱՎՈՐԱԿ
-  ԱՆՇԱԿԱՆ ՄՈՐՏԻ ՎՈՏ
-  ԱՆՆ-ԿԱՍՏ ԽՈՐՀՈՐԾԱՆ ԿԱՄՐԱԾ
-  ԳՅՈՒՄԱՆ ԺԱՆՈՒՄԱՆ ԴՈՒՆ ԶԱՐԿԱՆ
-  ԱՄՈՂՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՐ ԱՄՈՂՉԱԿԱՆ
-  ԶՈՐ ԱՍՏՆԱԿԱՆ ԱՆՇԱԿԻ ԱՄՈՂՉԱՓԱԿԱՆ ԳՈՐԾԱՆ
-  ԲՆԱԿԻ ՎՈՐ ԺԱՆԱՆ ԽՈՐՀՈՐԾԱՆ

Նկ. 6



ԼՃԱՅԵՆԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ  
ԱՄՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՆԱԲԵՐՂԻ ՀԱՆՈՒՅԹԸ



նկ. 7

տաղրական, արվեստագիտական հասույթների վերաբերյալ:

Դամբարանների ամենատարածված տեսակը, այսպես կոչված, «քարարկղն» է, որն ունի քառանկյունի կամ քառակուսի ձև, գետնահողային հատակ, քարե ժայռաքեղոններից կամ տափակ սալերից շինած պատեր ու տանիք: Այս տիպի դամբարաններն իրենց ծավալային ու կառուցվածքային առանձնահատկություններով բաժանվում են բազմաթիվ տարատեսակների, որոնց նմուշները ներկայացված են (նկ. № 89) Քաղաքենդի և Լենինականի գամբարանադաշտերում՝ 1894 թ. Չարկովսկու և 1952 թ. Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից պեղված օրինակներով: Դամբարանների այս տիպը հանդիպում է Երևանի, Քալինի, Աշտարակի, Դիլիշանի, Կիրովականի, Ալավերդու, Սիսիանի, Գորիսի և բազմաթիվ այլ շրջաններում, որոնց թվարկումն իսկ շատ ժամանակ կիսել: Սրանց հետ միասին հանդիպում են նաև հիմնահողային թաղումներ (Լենինական, Կարմիր բլուր, Քաղաքենդ, Տոլորս, Գեղարոտ և այլն), փայտե ծածկով կամ առանց ծածկ, որոնք պարզապես անպաճույճ քառանկյունի կամ քառակուսի դամբարանափոսեր են առանց բարդ մանրամասների: Թաղումների այս հիմնական ձևից քիչ են տարբերվում դամբարանաթմբային հուշարձանները, որոնք քարարկղ կամ հողային դամբարանի վրա կրում են տարբեր մեծության քարակույտեր կամ հողի բլրակներ: Թաղումների այս տիպը մեծ մասամբ տարածված է Սևանի ավազանում, Ղարաբաղում, Լոռի-Քոնղեղում և այլուր: Սրանցից առանձնապես ուշագրավ են 1956—1966 թթ. ուսումնասիրված (ղեկավար Հ. Հ. Մնացականյան) Լճաշենի ցեղային առաջնորդների դամբարանաթմբերը, որոնց տրամագիծը հասնում է 18—20 մետրի: Մայր հողի մեջ պատրաստված թաղման սրահներն ունեն 5—8 մ երկարություն, 2,5—3,5 մ լայնություն, 3 մ բարձրություն, կառուցված են 3—5 տոննանոց ժայռաքեղոններից, ունեն կրկնակի գերանածածկ տանիք և քարե ծածկույթ՝ կեղծ կամարի ձևով շինված: Առաջնորդների աճյունները դամբարան էին իջեցնում շքեղ դիակառքերով, որոնց վրա և շուրջը տեղավորում էին ննջեցյալի արդուզարդը, հանդերձանքը, սպառազինությունը, ձիասարքը, առաջնության խորհրդանիշերը: Գերեզմանի փայտե խուցը պաստառապատում էին բեհեզյա գործվածքներով, ննջեցյալին ծածկում ոսկեկար

ու ոսկեզարդ սավանով, նրա հագուստը ներկում էին կարմիր օխրայով և այլն:

Դամբարանաթմբերի խոշոր հուշարձաններ են ուսումնասիրվել անցյալ դարի 90-ական թվականներից է. Ռեսլերի, Ա. Մեշչանինովի, Ալեքսեյեվի, Կուշնարևայի և այլոց կողմից Լեռնային Ղարաբաղի Առաջածոր և Խոջալի գյուղերի մոտ: Խոջալի դամբարանադաշտը բաղկացած է 30 կուրգաններից, որոնք սփռված են 1 քառ. կմ տարածության վրա և ներկայացնում են թաղումների երկու հիմնական տիպ, իրենց տարատեսակներով:

Առաջին խումբ—խնամքով կառուցված միջին մեծության քարաթմբեր բոլորովին հարթ գագաթով:

Երկրորդ խումբ—Հողաթմբեր՝

ա) Բարձր ու մեծ, որոնց գագաթի մասը արեւելյան կողմից մասամբ ծածկված է գետաքարով:


բ) Մեծ ու միջին չափի, որոնց գագաթի գոգավոր մասը ծածկված է գետաքարով:

գ) Մեծ կամ միջին չափերի, որոնց գագաթի գոգավորությունը քարե ծածկույթ չունի:

դ) Հողաթմբեր, գագաթի հարթ մասով, առանց գոգավորության և քարե ծածկույթի:

Սրանց զգալի մասի թաղման սրահները փայտածածկ են:


Ներկայացված այս տիպերը տարբերվում են իրարից նաև դամբարանների ձևերով ու կառուցվածքով: Երկրորդ խմբի դամբարանաթմբերի մի մասը պարունակում էր ցեղային առաջնորդների հսկա քարարկղյա թաղումներ, մյուս մասը՝ միջին չափի քարարկղներ, իսկ երկրորդ խմբի դամբարանաթմբերը՝ գետնահողային թաղումներ դիակիզման հետքերով: Խոջալի դամբարանադաշտի էմիլ Ռեսլերի կողմից անցյալ դարի վերջերին պեղված 22 հուշարձաններից մի քանիսը շատ նշանավոր են: Լճաշենի, Գեղարոտի, Նորատուսի, Շամիրանի և այլ դամբարանադաշտում շատ տարածված են այսպես կոչված կրոմլեխները, որոնց կենտրոնական քարարկղային կամ գետնահողային թաղումները շուրջանակի պատված են ցից քարերով: Քարե այս շրջանակների տրամագծերը հասնում են 3—20 մետրի: Թաղման խցերի չափերը 3—4 քառ. մետրից հասնում են 10 մետրի: Թաղումներն, իբրև կանոն, ավելի աղքատիկ են, քան դամբարանաթմբայինները (նկ. 10—11): Այս տիպի հուշարձաններից առանձնապես ուշագրավ




вч. 8

погребение


Разрез плит



плиты



план погребения



Размеры в см.ох


Масштаб = 1:25



1 m. 0 1 2 3 m.  
24. 10

են Քալինի (Աշտարակի շրջանի Շամիրան գյուղի սահմաններում ընկած կիկլոպյան մեծ ամրոց բնակատեղիի դամբարանադաշտը, որի մի քանի հարյուր խնամքով պատրաստած, գեղեցիկ կրոմ-լեխները հաճախ օղակված են սրբատաշ քարերով: Վերջիններն էլ զարդարված են կենդանիների ու երկրաչափական ձևերի ունիոնի պատկերներով, իսկ շրջանակի կենտրոնական մասում ունեն ուղղաձիգ դրված քարի սյուներ՝ մենհիրներ, որոնք հեռվից անտառի տպավորութուն են թողնում (նկ. № 13—14):

կալ տեսակներ: Այսպիսի դամբարանադաշտերից ամենահարուստն ու հետաքրքրականը 1959 թ. բացված և այժմ ուսումնասիրվող (ղեկավար Տ. Խաչատրյան) Արթիկ-Տուֆի № 15 քարհանքի դամբարանադաշտն է, քաղաքից 4 կմ դեպի արևմուտք: Քարհանքի հսկա տարածութան վրա այժմ ուսումնասիրված են հարյուրավոր (253) ինքնատիպ դամբարաններ, որոնք փորված են վարդագույն տուֆի ստվար լավայի մեջ և ներկայացնում են օվալաձև փոքրիկ դամբարանախցիկ քարի հատակով և տանիքով, վերևից փոր-



նկ. 11

Մենհիրների այդպիսի անտառներ կան Շամշադինի շրջանի Նավուր գյուղի մոտ, Զանգեզուրի Ղարաքիլիսա գյուղի մոտ և այլուր: Հետաքրքրական առանձին մենհիրներ են կանգնեցված Նավուր գյուղի չորանոցների մոտ, Քալին գյուղի մոտ, Սիսիանի մոտ գտնվող Ղոշունդաշի հին բնակավայրի սահմաններում և այլուր: Քաղումների այս խումբը լավ ուսումնասիրված չէ: Աշտարակի և Շամշադինի շրջանի Ղրղի ու Զորաթան գյուղերի դաշտերում դրվածներից բաղկացած «մեռյալ քաղաքներ» կան: Այս դրվածները կառուցված են ուղղաձիգ կանգնեցված հսկա քարերից, ունեն մուտք, տանիք: Այդ փոքրիկ քարաշեն տնակները քարարկղային թաղումներից տարբերվում են նրանով, որ դրված են գետնի վրա և ոչ թե հողի մեջ: Դրվածենային թաղումները Հայաստանի համար այնքան էլ բնորոշ չեն:

Հայաստանի տարբեր շրջաններում հանդիպում են նաև դամբարանների շտարածված, ունի-


ված կլոր կամ քառակուսի անցքով, որը կազմում էր մի ամբողջութուն թաղման խցի հետ (նկ. № 15): Անցքը վերևից փակվում է քարի խցանով, որն, իբրև կանոն, իր գույնով ու քարատեսակով տարբերվում է դամբարանի քարից: Խցանների վրա և դամբարանների պատերին երևվում են փորոզ և հարդարող մետաղե գործիքների հետքերը: Դամբարաններին կից երբեմն պատահում են թաքստոցներ, որոնք որպես կանոն թալանված են: Դամբարանները հաճախ բոլորովին ազատ են լինում հողից: Խցանները ամուր պահելու համար, նրանց ներքևի մասում քարի լիցք է արվում կամ պատ շարվում: Արթիկ քաղաքի շրջանում տուֆի շերտերի մեջ պատրաստված նման դամբարաններ հանդիպում են, սակայն սրանք էլ բնորոշ չեն ոչ Հայաստանի, ոչ էլ Կովկասի համար:


Իբրև դամբարանային հուշարձաններ Հայաստանում հայտնի են նաև քարայրները:

Fig. 13



Fig. 12





264. 14




## ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

### I. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ծթե վերը նկարագրված բնակատեղիներն ու դամբարանադաշտերը ստույգ տվյալներ են տալիս մեզ ժամանակի շինարարական տեխնիկայի, ճարտարապետական ձևերի զարգացման, կենցաղի, հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքի և թաղման ծեսերի, սովորույթների, հավատալիքների վերաբերյալ, ապա նրանց պեղումներով հայտնաբերված նյութական արտադրության տասնյակհազարավոր իրերն ու առարկաները կոնկրետ պատկերացում են տալիս հա-

րակության արտադրողական ուժերի զարգացման ամենահիմնական ասպարեզներից էին մետաղահանութունն ու մետաղաձուլությունը: Ծրկրի հյուսիս-արևմտյան, հյուսիս-արևելյան և հարավային շրջանների դարավոր անտառներով պատած լեռներն իրենց ընդերքում պահպանում էին պղնձի, երկաթի, կապարի, արծաթի, ոսկու և այլ հանքանյութերի հարուստ պաշարներ, որոնք լայնորեն օգտագործվում էին մ.թ.ա. II հազարամյակի վերջերին: Հայկական բարձրավանդակի երկրաբանական քարտեզի վրա այժմ նշված են մոտավորապես 400 հանքավայրերի հետքեր, ո-



Նկ. 15

սարակական արտադրամիջոցների և արտադրողական ուժերի, երկրի զարգացման, տնտեսական մակարդակի վերաբերյալ, որը հասարակության շարժիչ ուժն էր նրա առաջընթացի գլխավոր զրսպանակը: Հայաստանի ուշ բրոնզեդարյան հասա-

րոնց արդյունաբերական օգտագործումն սկսվել էր հազարավոր տարիներ առաջ: Ինչպես վերը տեսանք, Հայաստանի մասամբ միայն ուսումնասիրված բնակատեղիներում գոյություն ունեին

մետաղե դործիքներ ու դենքեր պատրաստելու արհեստանոցներ, ձուլարաններ, հանքանյութի ղտման-հարստացման հարմարանքներ և այլ արտադրական կոմպլեքսներ, Հատկանշական է, որ դրանցից շատերը դսնվում են լեռնահանքային բաղաններից հեռու դաշտավարային շրջաններում: Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիի ամենաստորին 5 մետրանոց շերտում և բնակավայրի տարածության վրա հայտնաբերված են պղնձաձուլական ու երկաթաձուլական հնոցի մնացորդներ կավե հալոցների, խողովակների, ձադարիկների, հանքանյութը մշակելու բազմաթիվ ու բազմապիսի քարե մուրճերի, կացինների, սանդղիկների և պղնձաձուլական 4 կաղապարների բնորոշ կոմպլեքսներով: Բազմաթիվ կավե կաղապարներ են հայտնաբերված Միսիանի Ախլաթյան դուզի պղնձագործի փոքր-ինչ ավելի ուշ ժամանակաշրջանի դամբարանից: Արթիկի ինքնատիպ դամբարանախցերից մեկում պահպանվել են կավե փոքրիկ դալիկներ՝ ձուլված մետաղը վերցնելու համար: Ուշ բրոնզեդարյան կաղապարներից երկուսը (Լենինական, Կարմիր բլուր) բրոնզե սակրերի, երկուսը (Մուխաննաթ-թափա, Մեծամոր) ձեռքի թեթև հատիչների, մի քանիսը (Կարմիր բլուր, Ախլաթյան) ձողեր ու ձուլածո մոդելներ, երեքը (Արազած, Մուխաննաթ-թափա, Դվին) զարդեր պատրաստելուն էին ծառայում: Դվինի նախաուրարտական շերտից հայտնի են ևս երկու կաղապարներ՝ չափազանց նուրբ զարդեր ձուլելու համար, ցավոք դրանք հրատարակված չեն: Հասկանալի է, որ զանազան տիպի գործիքներ ու զենքեր ձուլելու դեռևս չհայտնաբերված հարյուրավոր կաղապարներ պահպանվում են հին բնակատեղիների թանձր շերտերում: Նրանց բազմազանության ու առատության մասին որոշ գաղափար են տալիս նաև արևելյան Վրաստանում հայտնաբերված դաշույնների, սրերի, գրերի, կացիների և այլ իրերի ձուլման կաղապարները (տախտ. 1, 2) հնում զգալի թիվ էին կազմում. նաև գեղարվեստական նուրբ իրեր, առանձին ու խումբային արձանիկներ ձուլելու կաղապարների հարյուրհազարավոր ինքնատիպ նմուշներ, որոնք պատրաստվում էին մոմից ու նրբակավից և ոչընչանում ձուլելու պրոցեսում: Գործիքներ արտադրող այս գործիքների, այսինքն հիմնական արտադրամիջոցների և մետաղե պատրաստի արտադրանքի մասնադիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական մետաղագործ վար-

պետները տիրապետում էին պղնձի ձուլման, այլ մետաղների խառնուրդից բարձրորակ բրոնզ ստանալու տարբեր եղանակներին, մետաղե ամենանուրբ ու գեղեցիկ առարկաների պատրաստման, զարդանախշման, փորագրման, ոսկեպատման բազմապիսի հնարքների ու հմտությունների:

Թեև ուշ բրոնզեդարյան Հայաստանում աշխատանքի բազմաթիվ գործիքներ, զենքեր, զարդարանքի ու արվեստի առարկաներ պատրաստվում էին մետաղներից, այնուամենայնիվ քարագործությունը, Հայաստանի նախնադարյան տնտեսության ամենահիմնական ու ծաղկուն ճյուղերից մեկը, չէր կորցրել դեռևս իր նշանակությունը: Քարից էին պատրաստվում առանձնապես երկրագործության մեջ օգտագործվող աղորիքների, սանդղի, վարսանդների, տրորիչների, կալսիչ գործիքների, պահանգավոր մանգաղի ներդիրները, փայտե կամերի կտրիչները և երկրագործության ու տնային տնտեսության մեջ օգտագործվող այլ գործիքներ, որոնք մեր երկրի երկրագործ անասնապահ ցեղերի նյութական մշակույթի մի զգալի մասն են կազմում (տախտ. 3): Լայնորեն կիրառվում էին նաև բրոնզյա մանգաղներն ու դանակները (տախտ. 4, 5), փայտե արորները, գուցե նաև սերմնացան-գութանները, թիբրը, թիակները, փայտատները, երկժանիները ու եռաժանիները, որոնք նման էին բրոնզե ու երկաթե նուլնատիպ իրերին՝ Հայաստանի դամբարաններից հայտնաբերված ցեղային առաջնության սիմվոլներին (տախտ. 6): Փայտագործության բարձր զարգացման մասին են վկայում Հայաստանի հնավայրերից հայտնի ատաղձագործ ու հյուան վարպետների բազմաթիվ գործիքները՝ բրոնզե սղոցը ձուլածո, խողովակակոթառ, փայտակոթառ, թիթեղի հաստ զանգվածից պատրաստած ֆունկցիոնալ տարբեր նշանակություն ունեցող, ինչպես նաև բաղադրյալ կաղապարներում ձուլված դրերը՝ մետաղից կամ թանկարժեք քարից պատրաստված՝ ագուցված գլանաձև կամ բազմանկյուն կոթերով (տախտ. 7):

Բրոնզեդարյան վարպետները այսպիսի գործիքների օգնությամբ էին պատրաստում թանկարժեք կարմիր փայտից, դիմացկուն ու ճկուն փայտատեսակներից և հարյուրավոր դետալներից բաղկացած լճաշնի ու Գետաշնի (ն. Ագիաման) դամբարանադաշտում հայտնաբերված բազմապիսի սայլերը՝ բարձրակող, ցածրակող, կամարակալ ծածկով, երկանիվ ու քառանիվ սայլերը,

մանկական սայլակները, ճանապարհորդական կառքերն ու ճեպընթաց մարտականքերը, որոնք նախշված էին գեղեցիկ փորագրութիւնների երկրաչափական մոտիվներով և որոնց մետաղյա գեղեցիկ մոդելները հայտնաբերվում են նույն դամբարաններում (տախտ. 8): Հայաստանում հայտնաբերված վերոհիշյալ փոխադրամիջոցներն իրենց զուգահեռներն ունեն Շումերական (Ուր, Քիշ, Շոտուպպակ) վաղ դինաստիական ժամանակաշրջանի, ակկադական թագավորութան (Քեփե-Պավրա), Ասսուրական և Կովկասյան հուշարձաններում: Լճաշենի պեղումներից հայտնի է, որ Հայաստանում պատրաստում էին նաև կենցաղային ու տնային կահ-կարասիների բազմազան առարկաներ, կապարճներ, նետասլաքների ու նիզակների կոթեր, դաշույնների ու սրերի նրբաճաշակ, գեղարվեստորեն ձևավորված բռնակների ներդիրներ և այլն:

Ուշ բրոնզեդարյան դամբարաններում, փոխադրամիջոցների հետ միասին հանդիպում են նաև ձիասարքերի կոմպլեկտներ, սանձեր՝ անիվատիպ ու ձողաձև կողակալներով (տախտ. 9), ձիերը զարդարելու համար զանազան իրեր ու առարկաներ (տախտ. 10):

Հնարավոր է, որ փայտագործության մեջ լայնորեն կիրառված լինեին նաև ձեռքի կողային ելուստներով տափակ կացիները (տախտ. 11), թեև, հնագետների կարծիքով, սրանց տարատեսակները օգտագործվել են գերազանցապես կաշեգործության մեջ, սրը նախնադարյան Հայաստանի գլխավոր արհեստներից մեկն էր: Անտառահատության և փայտի կոպիտ աշխատանքների մեջ լայնորեն կիրառվել են Հայաստանում և Անդրկովկասում շատ տարածված զանգվածեղ բրոնզե սակրերը, որոնք անցյալում կոչվում էին ամազոնական սակրեր և գերազանցապես օգտագործվում իբրև մարտական զենք: Սակայն սրանց մի մասի բանող սայրերը խիստ բթացած են աշխատանքից և այդ անհերքելի ապացույց է նրանց իբրև գործիքի օգտագործման: Այդպիսի սակրեր հայտնի են Քաթիայից, Քալշարուխից, Լորուտից և այլ վայրերից (տախտ. 12):

## II. Զենքեր

Այնուամենայնիվ զանգվածեղ մարտական սակրերը դեպքերի գերազանց մեծամասնությամբ հանդիպում են դամբարաններում, սրերի, դաշույն-

ների և սպառազինման այլ առարկաների հետ, որով և ապացուցվում է նրանց զենք լինելու հանգամանքը: Հայաստանի մարտական սակրերն այժմ շատ մեծ թիվ են կազմում, բաժանվում են տիպաբանական և ժամանակագրորեն իրար հաջորդող մի քանի խմբերի: Սրանցից առաջինը Լճաշենի, Արթիկի, Լորուտի սակրերն են՝ սեզմենտաձև բանող մասով և պարզունակ օվալաձև կոթառով՝ առանց կողային երիզների, երկրորդը՝ ունակյան ժամանակաշրջանի մասսիվ, լայնորեն տարածված սակրերն են կիսակլոր բանող մասով և կոթառի ուղղաձիգ երիզներով: Երրորդ խմբի մեջ են մտնում ավելի միևնափայտ և կատարյալ ձևեր ունեցող սակրերը, որոնք ընդհանուր առմամբ հարում են Վարդաքար-դարաբաղյան տիպերին: Սակրերի հիմնական տիպի այս երեք տարբերակները տարածված են Հայաստանում, Արևելյան Վրաստանում, Արևմտյան Ադրբեջանում՝ Կարսից մինչև Սոչի-Գուդաուտիի գիծը, Արարատյան դաշտից մինչև Լեռնային Ղարաբաղ: Սրանց արտագրության հիմնական կենտրոններից մեկը Տաշիր-ձորագետի մետաղագործական օջախն է: Արևմտահայաստանում և Առաջավոր ու Փոքր Ասիայի տերիտորիաներում այսպիսիներն իբրև կանոն չեն հանդիպում: Այժմ Հայաստանում հայտնի են նաև զանգվածեղ կամ միևնափայտ սակրերի սպեցիֆիկ արևելյան տեսակներ, որոնք թեև մասամբ միայն սպառիչ համադրություններն են հին արևելյան նյութերում, սակայն ընդհանուր առմամբ միանգամայն տիպական են Արևելքի համար (տախտ. 13): Դրանցից Արթիկի նրբագեղ սակրերը և Լճաշենի ելուստախիտ կոթառով սակրը համադրություններ ունեն Փոքրասիական և Ասորիք-պաղեստինյան նյութերում, Իջևանի սակրը՝ Առաջավոր ասիական կոմպլեքսներում: Կարմիր բլուրի անդրկովկասյան տիպի սակրը թեև նման չէ առաջավոր ասիականներին, այնուամենայնիվ սուր ելուստներ ունի կոթառի վերին մասում: Կասկածից վեր է, որ սրանք բոլորն էլ պատրաստված են տեղում: Արթիկի № 3 դամբարանից հայտնի կացիներ առայժմ ունի մեկ զուգահեռ Հայաստանում, սակայն այդ տիպի մի քանի զենք-գործիքներ հայտնի են Արևմտյան Ադրբեջանի, Վրաստանի, Քալիշի հնավայրերից: Մարտական կացիների մեջ առանձնակի տեղ են գրավում, այսպես կոչված, կոլխիդա-կորանյան երկու հիմնական տարբերակ ունեցող կացիները, որոնց արտագրության հիմնական կենտրոնները

Բզիբյան Արխայիան (Կոլխիդան) և Հյուսիսային Օսեթիան են (տախտ. 14): Սակայն այս տիպի զենքերը Հայաստանի վրայով տարածվում են Փոքր Ասիայի խորքերը և մերձուրմյան շրջանները: Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ սրանց արտադրությունը կարող էր գոյութուն ունենալ նաև ճորոխի ավազանում, սակայն այդպիսի տեսակետն առայժմ չի հաստատվում:

Ավելի մեծաքանակ բազմաբղետ, ժամանակագրորեն երկնաբան է են Հայաստանի դամբարանադաշտերում հայտնաբերված դաշույնները: Նրանք բաժանվում են վեց հիմնական խմբերի, որոնցից վերջին երկուսը պատկանում են ուշ բրոնզեդարյան շրջանի II—III փուլերին, առաջին երկուսը վաղ փուլին, 3—4-ը միջին փուլին, և հասնում են ուշ բրոնզեդարյան մշակույթի սկզբից մինչև վաղ ուրարտական ժամանակաշրջանը (տախտ. 15): Առաջին խմբի դաշույնները պարզունակ բրոնզե շեղբեր են՝ ընդերկայնական միջանկյալ կողով և փայտե կամ ոսկրե դաստակի երկար լեզվակով, որի վրա երբեմն անցքեր կան դաստակի գամերի համար: Դաշույնների այս տիպը գալիս է միջին բրոնզեդարյան շրջանից, տարածվում է ոչ միայն Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածներում այլև Արևելյան Վրաստանում գերազանցապես XIII—XII դդ. դամբարաններում: Մ.թ.ա. XIV դարի վերջերից Հայաստանի գինագործներն սկսում են պատրաստել մինչև այդ անհայտ և Հայաստանի համար բնորոշ եռանկյունաձև լայնաշեղբ դաշույններ, շեղբի ուղղաձիգ փորագիր ակոսներով ու գլանաձև դաստակի կիսասֆերիկ գլխիկով: Նրանց որոշ մասը ունի բրոնզե ծակոտկեն պատյաններ՝ մոմե նուրբ կաղապարների մեջ ձուլված, որոնք հիշեցնում են Ուրի թագավորական դամբարանի նրբագեղ ոսկյա պատյանը: Այս տիպի դաշույնները հանդիպում են նույնպես XIII—XII դդ. թաղումներում և կարող են պայմանականորեն անվանվել լճաշեն-արթիկյան տիպի: Սրանք լայնորեն տարածված են Անդրկովկասում և երբեմն հանդիպում են պարսկական թալիշում ու Հյուսիսային Կովկասում իբրև ներմուծման առարկաներ (տախտ. 16):

Դաշույնների հաջորդ երկու խմբերը ներկայացված են ավելի քիչ նմուշներով, պատկանում են հին արևելյան ընդհանուր տիպերի և պահպանվում շատ երկար ժամանակ:

Սրանցից առաջինները բարձր արվեստով ձե-

վավորված, ծակոտկեն դաստակներով և դաստակի հիմքում շեղբակալ ունեցող երկմասանի դաշույններն են, որոնց շեղբերը ձուլված և ագուցված են առանձին (տախտ. 17): Սրանցից հայտնի է առայժմ վեց օրինակ (երկուսը Արթիկի դամբարանադաշտից չհրատարակված), որոնցից մեկն ունի երկաթե շեղբ և պատկանում է հավանաբար X դարի վերջերին, իսկ մնացածները XIII—XII դարերին: Սրանց անալոգները հին արևելքում և Հյուսիսային Կովկասում շատ ընդհանուր են և այդ պայցուցում է, որ նրանց առանձին աշխարհագրական խմբերը տեղական արտադրության արգասիքներ են (տախտ. 18):

Աշխարհագրական նույն արեալների մեջ են տարածվում արևելյան տիպի միաձուլյ դաշույնները՝ դաստակի քառանկյունի շրջանակաձև հանվածքներով՝ փայտե կամ ոսկրե ներդիրների համար: Այս տիպը լայնորեն տարածվում է Մերձավոր Արևելքում մ.թ.ա. XX դարից սկսած, Պարսկական թալիշից մինչև Ասորիք-Պաղեստին և Հյուսիսային Կովկաս, առանձնապես շատ տարբերակներ ունի իրանական հուշարձաններում (տախտ. 19, 20):

Դաշույնների հաջորդ երկու տիպերը բնորոշ են Հայաստանի մերձսևանյան արտադրական օջախի համար, տարածվում են գերազանցապես Անդրկովկասում և ոչ մի կապ չունեն հին արևելյան ընդհանուր տիպերի հետ: Սրանք ունիֆիկացված զենքեր են և լայնորեն արտադրվել են գերազանցապես XI—X դարերի ընթացքում և շարունակում են հարատևել փոքր-ինչ ուշ երկաթե նույնատիպ զենքերի հետ: Սրանց առաջին խմբի դաստակները գլխիկներ չունեն, պատրաստված են թիթեղի կիսակլոր շերտերից ու փայտե զարդարուն ներդիրներից: Երկրորդ խումբը՝ փայտե կոթով լեզվակավոր դաշույնաշեղբեր են՝ բրոնզե ծակոտկեն ագուցվող գլխիկներով (տախտ. 21): Ուշ բրոնզեդարյան I փուլի դամբարաններում հաճախ հանդիպում են III—IV խմբերի դաշույնների նման սրեր, որոնք տարբերվում են միայն երկարությամբ, բայց ունեն դաստակի շրջանակաձև հանվածքներ և մահիկաձև հիմքի շեղբակալներ:

Ավելի ուշ, մոտավորապես XI դարի սկզբից, տեղական դաշույնների հիման վրա պատրաստվում են ծանր լայնաշեղբ սրերի երկու տարբերակներ (կլոր և ուղիղ հատված ծայրերով), որոնք շեղբերի ու դաստակների կառուցվածքով ոչնչով

չեն տարբերվում վաղ բրոնզեդարյան I փուլի II խմբի դաշույններից (տախտ. 22): Հարձակողական զենքերից առանձնապես մեծ կիրառում ունեին բրոնզյա խողովակակոթառ նիզակները, որոնց երեք տարբերակների հիմքում ընկած է գործող մասի և կոթառի երկարության հարաբերակցությունը՝ նիզակներ երկար կոթառով կարճ սայրով, նիզակներ միջին հարաբերակցության, նիզակներ երկար սայրով և կարճ կոթառով (տախտ. 23): Սրանց փայտե կոթերը շեն պահպանվել, սակայն ամենուրեք նիզակների հետ հանդիպում են կոթի բրոնզյա գլանաձև ծակուկեն երկարուկ, կարճ, ուղիղ գոտիներով ու կոճակներով, ուռուցիկ ոտմրիկներով և այլ տիպերի ծայրապանակներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում ձուլման տեխնիկայի տեսակետից (տախտ. 24):

Հարձակողական շափազանց տարածված զենքերից էր նաև նետ ու աղեղը: Փայտյա աղեղները որպես կանոն շեն պահպանվել: Բրոնզյա գծազարդ գոտիների և խեցեղենի պատկերներից դիտենք միայն, որ Հայաստանում և Անդրկովկասում տարածված էին լայնալիճ և փոքր աղեղները: Սակայն մեկ երկու դեպքում պահպանվել են փայտյա գլանաձև կապարճները՝ նետերով լի: Տարբեր տիպի նետեր հանդիպում են բոլոր դամբարաններում, սրանք ևս, հստակորեն բաժանվում են ժամանակագրական և տիպաբանական մի քանի խմբերի (տախտ. 25): Ստորև բերում ենք այդ տիպերը ժամանակագրական հաջորդականությամբ:

1. Օբսիդիանից կամ կայծքարից նուրբ ուսուղով պատրաստած նետասլաքներ հիմքի քառակյունի կամ օվալ հանվածքով, սկիզբ են առել նեոլիթյան շրջանում, հանդիպում են ուշ բրոնզեդարյան և երկաթի ժամանակաշրջանի շատ դամբարաններում:

2. Բրոնզե հաստ թիթեղից պատրաստած պոչուկավոր նետասլաքներ, բնորոշ են 1-ին փուլի դամբարանների համար:

3. Զանգվածեղ, ծանր նետասլաքներ, երկար առանցքակալով ու ներքև թեքվող բեղիկներով, տարածվում են մ.թ.ա. XII դարի վերջերից:

4. Թեթևացված նետասլաքներ ծայրային ոտմբիկներով:

5. Բրոնզե կամ ոսկորե քառակյունաձև հատվածքով նետասլաքներ կլոր կարճ պոչուկով:

Մոտավոր և հեռավոր մարտում լայնորեն օգ-

տագործվում էին նաև գուրգերը, որոնց բրոնզյա բազմաթիվ զլխիկները պահպանվել են դամբարաններում, սրանց մի մասն ունի գնդաձև կամ օվալ գծագրություն, ողորկ մակերես, կլոր կամ քառակյունի կոթակալ կենտրոնական մասում (տախտ. 26): Տանձաձև գուրգեր մակերեսի կլոր բշտիկներով, կլոր գուրգեր ուղղաձիգ կողերով և գուրգեր սուր բշտիկներով, հանդիպում են բրոնզեդարյան և երկաթի ժամանակաշրջանի շատ հուշարձաններում, որոնք զուգահեռներ ունեն արևելիյան հնագույն և ժամանակակից նյութերում:

Մ.թ.ա. XII դարի վերջերից հետզհետե տարածվում են երկաթից պատրաստած զենքերն ու գործիքները, որոնք այնքան մեծ դեր պետք է կատարեին տնտեսության մեջ և ռազմական գործում: Ուշ բրոնզեդարյան II—III փուլերի դամբարաններում առանձնապես տարածված են երկաթե նիզակները և դանակները, որոնք նման են բրոնզյա նախատիպերին: Նրանք համապատասխանում են նաև հին արևելյան տիպի նիզակներին, որոնք այդ շրջանում, օրինակ Ասորեստանում, համարվում էին թագավորական շատ թանկարժեք զենք (տախտ. 27):

Պաշտպանության միջոցներ: Սրանք համեմատաբար համեստ են ներկայացված ուշ բրոնզեդարյան կոմպլեքսներում, որովհետև պատրաստվում էին գերազանցապես նեխող նյութից, ճյուղերից, փայտից, կաշվից և այլն: Այդ շրջանի գոտիներից ու կնիքներից մեկական օրինակի վրա պահպանվել են բոլորովին կլոր վահաններ, ուշ շրջանի ուրարտական վահանների տեսքով (տե՛ս Շամշ. գոտին), ինչպես նաև երկարուկ կիսակլոր վահանների տիպեր. սրանք նման են ասուրական մարտիկների վահաններին և առատորեն ներկայացված են Միջագետքի արվեստի հուշարձաններում: Քիչ են զրահների բրոնզյա թեփուկները, որոնք կրկնվում են արևելամիջերկրականի շրջաններից, մասնավորապես Մեզիդոսից հայտնի տիպերում: Առանձնապես մեծ տարածում են գտել Հայաստանում տեղական արտադրության վահանները, որոնք բաղկացած էին կաշվե բաճկոնակներից և բրոնզյա սկավառակաձև թիթեղների, հարյուրավոր կոճակների ու փայտե մասերի բաղադրումից (տախտ. 28): Այսպիսիները տարածված էին նաև արևելյան Անդրկովկասի սահմաններում: Սաղավարտներն էլ ներկայացված են շատ աղքատիկ, լճաշենի մարտակառքերի բրոնզյա մոդելների վրա կանգնած զինվորները իրենց զըլ-

խին կրում են խեթական տիպի կակարթավոր սաղավարտներ: Մի քանի սաղավարտներ հայտնի են Լեոնային Ղարարաղի հողալիի ցեղային առաջնորդի դամբարանից և Վրաստանից, սակայն սրանք էլ այնքան վատ են պահպանված, որ նրանց ինչպիսին լինելը շատ դժվար է որոշել:

Ձառդարանքի, արվեստի, պաշտամունքի առարկաներ: Ուշ բրոնզեդարյան զարդարանքի առարկաները պատրաստում էին բրոնզից, անագից, ծարիրից, ոսկուց, կիսաթանկարժեք քարերից, նուրբ կավատեսակներից և այլն: Սրանց մեջ զգալի տեղ էին գրավում օղակաձև կամ րաց ծայրերով, ռումբիկ հատված ունեցող տափակ փորագիր ու վերադիր զարդերով, ատամնավոր ու ծակոտկեն մակերեսով, երկտակ բրոնզյա լարից պատրաստված, ուրրապտույտ ապարանջանները, նույն տիպերին պատկանող մատանիները, ոտքի մեծ ապարանջանները, զանգվածեղ ձուլածո մանյակները, թիթեղյա, բրոնզե և արծաթե դիադեմաները, օձագալար առանցքով հերակալները (տախտ. 29): Այս տիպի զարդերի մի աննշան մասը բրոնզե տարբեր գույնի ագուցվածք ունի (տախտ. 30): Այժմ արդեն հսկայական խումբ են կազմում գեղարվեստորեն զարդարված գլխիկներով բրոնզե գնդասեղները, որոնց չհրատարակված բազմաթիվ տարատեսակները հայտնի են նաև Լճաշենի ու Քեոփրի-քեոյի (էրզրումի մոտ) դամբարանադաշտերից (տախտ. 31): Բազմատեսակ ու բազմաթիվ են սկավառակաձև կլոր կախիչները՝ երկրաչափական հարթաքանդակ զարդերով և միջին չափի կիսասֆերիկ կոճակները, որոնց արտաքին մակերեսը ծածկված է ուլիթի եռանկյունիների, նշաձև, պարույրաձև զարդերի, համակենտրոն ուռուցիկ շրջանակների պատկերներով: Բազմաթիվ ու բազմատեսակ են նաև տանձաձև, գնդաձև, զանգակաձև, թռչնատիպ շղթայակապ պանդուկները, որոնց մակերեսը զարդարված է ծակոտկեն եռանկյունիներով և որոնք օգտագործվել են իբրև կախովի զարդեր (տախտ. 32):

Սակայն այս բոլոր զարդերից ավելի սիրելի ու տարածված էին կիսաթանկարժեք քարերից ու նուրբ կավերից պատրաստած ուլունքները՝ մանյակները, որոնք բաղկացած էին գնդաձև, սկավառակաձև, վարունգաձև, բիկոնիկ, թռչնաձև, գլանաձև, հարթ և փորագրված մակերես ունեցող ուլունքներից: Սրանց մեջ առանձնապես բնորոշ են ուշ բրոնզեդարյան առաջին փուլի նշաձև սարդիոնե ուլունքների լավ մշակված նմուշները, որոն-

ցից մեկի վրա սեպագիր նշաններով գրված է Ասուրական Ադադնիրարի թագավորի անունը (տախտ. 33): Գրուկյան պալեոգրաֆիկ առանձնահատուկությունները, ինչպես և ժամանակագրական ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ այս տիպի ուլունքները պատկանում են Ադադնիրարի I թագավորի ժամանակներին, այսինքն մ.թ.ա. XIII դարին: Քարից ու պաստայից պատրաստած այս ուլունքաձևերը կրկնօրինակվում էին մետաղագործ ու ոսկերիչ վարպետների կողմից: Արթիկի և Լճաշենի դամբարաններից հայտնի են վերը նկարագրած տիպի շատ մանյակներ՝ տարբեր մետաղներից պատրաստած (տախտ. 34): Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ոսկյա զարդերը, որոնք բարձր վարպետության ու տեխնիկական ծաղկուն մակարդակի գործեր են. որ կարող են զարմացնել նույնիսկ ժամանակակից վարպետներին: Սրանց մեջ կրկնվում են տեղական ուլունքների վերը նշված բոլոր տեսակները և ոսկյա բազմաթիվ այլ առարկաներ, որոնք տիպիկ են տեղական ոսկերչության համար, կամ համընկնում են հին արևելյան նմուշներին: Սրանցից առանձնապես հետաքրքրական են վարունգաձև և գլանաձև աժուր ոսկյա պատյանիկները, որոնք ագուցված են սարդիոնե կամ ագաթե կիսաթանկարժեք քարերի ուլունքներով, ինչպես և միջագետքյան տիպերի կրկնասկավառակաթիթեղ, քառապարույր, երկպարույր, եռանկյունաձև, հատիկավոր ուլունքները, դրոշմազարդ գորտուկը, գլանաձև փորագիր կնիքը, շղթայիկով բիկոնաձև զարդերը, որոնք ծագում են Լճաշենի և Տոլորսի դամբարանադաշտերից:

Առանձին և խմբային առձանիկներ: Ուշ բրոնզեդարյան արվեստի զարգացման բարձր մակարդակը առանձնապես շոշափելի է դառնում արձանիկների ուսումնասիրության ընթացքում, որոնք բոլորն էլ պատրաստված են նուրբ և բարդ բազադարյալ կաղապարների օգնությամբ, լրացուցիչ հարդարման, փորագրման, զարդանախշման միջոցով: Սրանք եղնիկների, եղջերուների, քարայծերի, տարբեր տեսակի թռչունների, ցուլերի գլխիկների մեծ արվեստով և ռեալիստական խոր ըմբռնմամբ կատարված գործեր են, որոնք գրեթե բոլորն էլ հագցված են շարժական առանցքակալների վրա, ծակոտկեն են, ներսում ունեն մետաղե գնդիկներ և զանգակների (погремушка) դեր են կատարում (տախտ. 35):

Կատարման տեխնիկայի բարդության և ար-

վեստի կատարելության տեսակետից առանձնապես աչքի են ընկնում խմբային արձանիկները՝ լճաշենի ցուլի և քարայծերի արձանախումբը և թեթև մարտական կուռքերի բրոնզե մոդելները, որոնց քաշող ղուլզ ձիերի առջևից երբեմն փախչում են հետապնդվող եղնիկներ, իսկ թափքի վրա կանգնած են սպառազեն խեթական տիպի սաղավարտներ կրող մարտիկներ:

Կանացի կուռքեր, ֆալլիկ արձանիկներ: Հայաստանի ուշ բրոնզեդարյան բնակատեղիներում շատ հաճախ են հանդիպում քարից պատրաստած կանացի կուռքեր, որոնք մարմնավորում են կին-մայր-աստվածուհիների գաղափարը՝ կապված երկրագործական պատկերացումների ու պաշտամունքների հետ՝ բեղմնավորության, պտղաբերության, սերունդների հարատևման ու վերարտադրության գաղափարների հետ: Իրենց զարգացման տեսակետից այս քարե արձանները բաժանվում են մի քանի բնորոշ խմբերի (տախտ. 36):

1. Մարդակերպ հարթաքանդակ նստած ֆիգուրներ, նեղ կոնքամասով, լայն նստուկով, վեր բարձրացրած թևերով: Սրանց արտաքին մակերեսը ծածկված է բուսական զարդանախշով, զուգակցում են ծառ-բույսի և կնոջ՝ պտղաբերության աստվածուհու գաղափարը:

2. Նույն կարգի կուռքեր առանց բուսական մոտիվների:

3. Հարթաքանդակ կուռքեր մարդկային դեմքի գծաբոլորով, բուսական օրնամենտի մնացորդներով, կամ առանց վերջինների:

4. Մավալային կլոր քանդակներ, գլխի, վզի, դեմքի զարդերի բարձրաքանդակ կատարմամբ:

5. Բազմադեմ կուռքեր, մեհյանական դահլիճի տարբեր կետերից դիտելու համար: Այս բոլոր տիպերը ընկած են հայկական քանդակագործության ժողովրդական դպրոցի հիմքում և սրանց զարգացումը շարունակվում է մինչև վաղ քրիստոնեական ժամանակաշրջանը: Դամբարանադաշտերում այս կուռքերի փոխարեն երբեմն հանդիպում են նույն տիպի քարից կամ կավից պատրաստած ֆիգուրներ, բայց ավելի հաճախ տղամարդկանց և կանանց բրոնզե մինիատյուր բազմազան արձանիկներ, որոնք, անկասկած, պաշտամունքային նշանակություն ունեն: Չափազանց հետաքրքրական այդպիսի արձանիկների մի ամբողջ հավաքածու է հայտնաբերվել Նոյեմբերյանի շրջանի Այրում գյուղում, որը պատկանում է մ.թ.ա. I հազարամյակի սկզբին:

Հին բնակավայրերում կուռքերի հետ միասին հաճախ են հանդիպում քարակոփ ֆալլիկ արձաններ, որոնք նույնպես կապված են պտղաբերության գաղափարի հետ: Սրանք երբեմն հսկայական չափեր ունեն (բարձր. մոտ. 2 մետր), երբեմն էլ գլխի մասին տրվում է մարդկային դեմքի ձև՝ մանյակներով ու հսկա ականջօղբով զարդարված:

Բնակավայրերում համեմատաբար փոքր թիվ են կազմում կենդանիների քարակոփ արձանները: Կարմիր բլուրից հայտնի է առյուծի քարե արձանը, որը ներդաշնակում է Գորիսի թանգարանի արվեստի հրաշալի նմուշին՝ առյուծի ձուլածո զանգվածեղ արձանիկին և կապված է արևի պաշտամունքի հետ: Դամբարանական նյութերում երկրագործական-անասնապահական երկնային էակների պաշտամունքն արտահայտված է պաշտվող եղևների, ձիերի ու այլ կենդանիների արձանիկներով, որոնք հաճախ կիրառական արվեստի հուշարձաններում հանգես են զալիս իբրև արևի և երկնային այլ էակների խորհրդանիշներ:

Արևի պաշտամունքի հետ են կապված Հայաստանի պետական պատմական թանգարանում պահպանվող սկավառակաձև, ճառագայթավոր զարդերը և երբեմն թռչունների փոքրիկ ֆիգուրներ կրող կախիչները, համակենտրոն շրջանակների թիթեղյա հսկա մեղալյոնները՝ ցլի գլխի ոճավորված կերպարով կենտրոնական մասում և այլ բազմաթիվ առարկաներ (տախտ. 37): Սրանցից ամենահետաքրքրականը համակենտրոն սկավառակի հիմքի վրա բարձրացող յոթ ճաստղերի՝ ֆիգուրներ կրող առարկան է, որ կարծես հիմք է տալիս մտածելու, որ մեր հեռավոր նախնիները կոնկրետ գաղափար ունեին յոթ մոլորակների մասին: Իզուր չէ, որ աշխարհահռչակ աստղագետներից շատերը Հայաստանը համարում էին Հին Արևելքի աստղագիտության կենտրոն, տոմսական առաջին հաշվումների ելակետային կենտրոն: Սակայն վերը բերած բոլոր իրերն ու առարկաները նվիրված են առանձին երևույթների պաշտամունքին և պարզ գաղափար չեն տալիս Հայաստանի նախաբնիկների բնապաշտական պատկերացումների ընդհանուր կոնցեպցիայի, սխտեմի մասին:

Այդ տեսակետից չափազանց ուշագրավ են բրոնզե հսկա թիթեղներից պատրաստած գոտիները, որոնք կրում էին իբրև զարդ, պաշտպանու-

թւան միջոց և պաշտամունքի առարկա (տախտ. 38, 39); Սրանք առաջ են գալիս ուշ բրոնզեդարյան մշակույթի II փուլից ոչ շուտ և հարատևում են մինչև ուշ ուրարտական ժամանակաշրջանը: Բաժանվում են մի քանի խմբերի (տախտ. 40, 41):

ա) գոտիներ հարթ մակերեսով, բ) գոտիներ երկրաչափական պարզունակ կամ բարդ փորագիր զարդերով՝ եռանկյունիներով, ումբերով, պարույրներով և այլն, որոնց սիմվոլիկ կրոնական նշանակութունը դեռևս վերջնականապես պարզված չէ, գ) գոտիներ կենդանական պատկերներով՝ եղնիկների, այծերի, ձիերի, ցուլերի և այլն, որոնք, ըստ երևույթին երկնային որոշակի մարմինների ու երևույթների սիմվոլներ են, դ) բարդ կրոնապաշտամունքային կոմպոզիցիա ունեցող գոտիներ, որտեղ ներկայացված են սիմվոլիկ որսի տեսարաններ, բնապաշտական երևույթների ամբողջական կոմպլեքսների մեջ, կամ արևի մարդակերպ աստծո ընթացքը՝ մարտակառքերով, հրեղեն ձիերի, թռչունների, արևների, երկնային լուսատուների ուղեկցութամբ: Ղարաբաղի գոտիներից մեկի վրա ներկայացված է մարդ աստվածութայան պայքարը երկնային շար ցուլի դեմ: Կան նաև գոտիներ, որոնք արտաբերում են ռեալիստական հետաքրքիր տեսարաններ: Սրանցից է Ստեփանավանի գոտին, որի վրա ներկայացված է ցեղային զինված ջոկատը՝ հետիոտն վահանակիր ու նիզակակիր մարտիկներով, հեծյալ ու մարտակառքի զինվորներով և առաջնորդի հսկա կերպարով հանդերձ: Հավանական է սակայն, որ այս գոտին էլ մագիկ-կրոնական նշանակութուն ունենա:

Պաշտամունքային խեցանոթներ ու առարկաներ: Բրոնզյա գոտիների կրոնական հարուստ սյուժեները հաճախ շարունակվում են նաև պաշտամունքային խեցանոթների վրա, որոնք, իբրև կանոն գտնվում են նախնադարյան սրբատեղիների, կրակի ատրուշանների կամ կացարանների սրբազան օջախների մոտ և դամբարաններում (տախտ. 42): Դիլիջանի փորագրագարդ անոթի ուսերին մարտակառքի վրա կանգնած մարդը հետապնդում է այծերի մի ամբողջ հոտ: Դվինի նախաուրարտական շերտի հսկա կարասների վերագիր ու փորագիր պատկերները ներկայացնում են հեծյալ և հետիոտն որսորդների կողմից կենդանիների հետապնդման հետաքրքրական տեսարան՝ ջրերի, լեռների, աստղազարդ երկնքի ֆոնի վրա:

Մի շարք այլ անոթների վրա փորագրութայան տեխնիկայով պատկերված են առանձին կանգնած ալժեր, եղջերուներ և այլ կենդանիներ. կամ ցուլերի ռելիեֆ գլխիկներ, որոնք զուգակցվում են երկրաչափական ու վերագիր զարդամոտիվների բարձր ճաշակով կատարված կոմպոզիցիաներով: Նշանակալից են նաև հայտնաբերված փոքրաթիվ քանդակազարդ սափորները՝ օձերի, առյուծների զոհաբերման տեսարանների ծավալային քանդակներով (Սանահին, Արզնի): Պաշտամունքային խեցանոթների մեջ են մտնում նաև բարձրավիզ նրբաճաշակ սափորները, որոնց ուսերի վրա երկրաչափական փորագիր զարդեր կան և որոնց նշանակութունն ու կիրառելիութունը ծեսերի ժամանակ այնքան էլ պարզ չեն: Բավականաչափ մեծ խումբ են կազմում կրակարանները, որոնք, ըստ երևույթին, օգտագործվում էին կրակի միջոցով դամբարաններն ու հանգուցյալներին ռեալիստ, շար ուժերից ազատելու համար (տախտ. 43): Դրանք արկղատիպ օվալաձև հանվածքներով և զավթատիպ սնամեջ զարդարուն իրեր են, որոնց մեջ վառվել է սրբազան կրակը, և որոնք սովորաբար հայտնաբերվում են մոխրի ու փայտածխի թանձր շերտերում, ինչպես դամբարանների մեջ, այնպես էլ կացարաններում: Պեղումների ընթացքում հետզհետե ավելանում է կավից պատրաստած երկարաճիտ կոշիկների թիվը, որոնք դրվել են գերազանցապես դամբարաններում՝ հանգուցյալների երթը դեպի անդրշիրիմյան աշխարհ դուրսին դարձնելու համար: Սրանց տարբեր տիպերը առանձնապես լայն տարածում գտան Հայաստանում և արևմտյան Ադրբեջանին կից վայրերում՝ ուշ բրոնզեդարյան էպոխայի սկզբից մինչև ուշ ուրարտական ժամանակաշրջանը (տախտ. 44): Սրանց մի մասը գավաթաձև, վերին մասով ու ունկերով կամ զույգ կոշիկների ձևով է պատրաստված, մյուս մասը՝ պարզապես երկարաճիտ կոշիկի ձև ունի, ոտքի ներքանները, թաթերը, երեսի Վկարերը, կրունկները, ճտքերի զարդերը և այլ մանրամասներ ներկայացված են այնպիսի վարպետութամբ, որ մենք կարող ենք լրիվ գաղափար կազմել նաև ժամանակի կոշկակարական արհեստի զարգացման ու կատարման տեխնիկական հնարքների մասին: Երկարաճիտ հետաքրքիր կոշիկներով են ներկայացված նաև Անդրկովկասի բրոնզե գոտիների վրա պատկերված որսորդ-աստվածները: Այս գոտիների ուսումնասիրութամբ կարելի է վերա-



կանգնել ուղ բրոնզեդարյան կոշկեղենի, տարազի, գլխարկների որոշ մանրամասները, որոնց մասին մենք այնքան քիչ տվյալներ ունենք:

Խեցեգործակաճ առաջագրաճ: Վերը ներկայացված պաշտամունքային խեցանոթների տիպերը ցույց են տալիս, թե Հայաստանում խեցեգործութունը ինչպիսի բարձր զարգացման էր հասել: Իբրև կանոն բոլոր խեցանոթները պատրաստվում էին բրուտագործական արագ պտտվող դուրգնի վրա, մակերեսների լրացուցիչ հարդարման ու զարդանախշման միջոցով, կավերի հատուկ բաղադրութունից, նյութի մշակման երկարատև և բարդ տեխնոլոգիայով: Խեցանոթների թրծումը տեղի էր ունենում երկհարկանի, տեխնիկական կատարելության հասցված թաղակապ մասնագիտացված վառարաններում, որտեղ ապահովվում էր շերմության հատուկ ռեժիմ: Ուղ բրոնզեդարյան խեցանոթների տասնյակ տիպերն ու հարյուրավոր տարատեսակները ժամանակագրության տեսակետից ու ֆունկցիոնալ նշանակությամբ բաժանվում են երեք մեծ խմբի՝ խեցանոթ-գործիքներ, սպասքի խեցեղեն և խոհանոցային խեցեղեն: Առաջին խմբի մեջ պետք է դասել խեցանոթ-գործիքները, որոնց օգնությամբ վերամշակում էին գերազանցապես անասնապահական ու երկրագործական մթերքները: Դրանցից առանձնապես լավ են պահպանվել տարրեր տիպերի ձևում-խնդիրները, քրեղանատիպ մաղերը, ներկի պնակները և այլն (տախտ. 45):

Երկրորդ խմբի մեջ են դասվում սպասքի առարկաներ, տարբեր տիպի քրեղաններ, թասեր, բարձրավիզ սափորներ, սկուտեղներ, կճուճներ, գավաթներ, բաժակատիպ մինիատյուր անոթներ, միականթ սափորներ և այլն (տախտ. 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53): Հիշատակված այս բոլոր տիպերը ձևաբանական ու օրնամենտալ մոտիվների փոփոխութուններ են կրում մոտավորապես 100 տարին մեկ: XIII—XII դարերի սպասքի խեցեղենը աչքի է ընկնում հատուկ տեխնոլոգիայով պատրաստված ողորկ, սև փայլաներկ մակերեսով, սպիտակ, երբեմն էլ կարմիր ու սպիտակ ինկրուտացիայի և նրբափայլ երկրաչափական օրնամենտների համադրությամբ: Քրեղանների, կճուճների, բարձրավիզ սափորների, բաժակատիպ մինիատյուր անոթների մակերեսը պատված է երկտակ, եռատակ, քառատակ ալիքների, զանգերի, եռանկյունիների, ուղղաձիգ փայլաներկ կամ փորագիր զարդերի, նուրբ զարդանախշերի մեկ կամ

մի քանի հորիզոնական գոտիներով, որոնք արտացոլում են ավանդական կապեր միջին բրոնզի գունազարդ խեցեղենի զարդամոտիվների հետ:

Այս շրջանի խոհանոցային խեցեղենը պատկանում է ձևաբանական նույն տիպերին, սակայն զուրկ է մակերեսի փայլաներկից, ձևերի կատարելութունից և օրնամենտալ նուրբ մոտիվներից: Անոթների խեցին հաճախ գորշ է կամ շագանակագույն, օրնամենտալ մոտիվները կազմված են համակենտրոն հորիզոնական գծերից, փորագիր ալիքներից, արևածաղկի սերմի ձև ունեցող փոսիկների գոտիներից և այլն (տախտ. 54, 55, 56):

Մ.թ.ա. XII դարի վերջերին և XI դարում, երկրագործության և անասնապահության աճող պահանջներին համապատասխան, երկրի խեցեգործ վարպետները թողարկում են մեծ քանակությամբ մասսայական խեցեղեն անոթներ, որոնք թեև ձևաբանական տեսակետից կապված են նախորդ խմբի անոթների հետ և պահպանում են խեցու բարձր որակը, սակայն մակերեսի սև փայլաներկ տեխնիկան, նրբին օրնամենտների աշխատաշատ գոտիներն անհետանում են (տախտ. 57, 58, 59, 60, 61): Խեցեղենը կորցնում է վաղեմի իր փայլն ու դեղեցկութունը, կոպտանում է, հնում կիրառվող մոտիվները պահպանում են իրենց ձևերը, սակայն կատարվում են պարզեցված եղանակով, թաց կավի վրա լայնակոս ու նեղ գծեր քաշելու օգնությամբ: Սկզբնական շրջանում այս գծերն անհավասար են, կոպիտ, ոչ այնքան սիմետրիկ. հետագայում այդ տեխնիկան զարդանու է և օրնամենտացիան հարստացվում, գեղեցկանում: Այս շրջանի խոհանոցային խեցանոթները քիչ են տարբերվում սպասքի առարկաներից: Մ.թ.ա. XIII—XI դարերի համար բնորոշ երկարավիզ սափորների, բաժակատիպ մինիատյուր անոթների, քրեղանների և այլ ամանեղենի մակերեսից իսպառ վերանում են օրնամենտալ մոտիվները և առավելագույնը պատվում է համակենտրոն գծերի մի քանի օղակներով: Երկարավիզ սափորների որոշ մասը դեռևս պահպանում են փայլեցման փորագիր գծերի և նոր առաջացած ներձկված կանելյուրների համադրության միջոցով կատարված զարդամոտիվները: Այս տիպի կերամիկան լավ է արտացոլում տեխնիկական առաջընթացի ցուցանիշները:

Հաջորդ X և IX դարերում խեցեղենի արտագործութունը նորից ծաղկուն վիճակ է ապրում: Ուղ բրոնզեդարյան հին փուլերից եկած ամանեղենի

տիպերի կողքին երևան են գալիս ձևավոր կան-  
թեր ունեցող սափորների, նեղվիղ կուժերի, բարձ-  
րանիստ երկկանթ ու միականթ գավաթների, ան-  
կանթ, միականթ, ելուստավոր քրեղանների և այլ  
անոթների բազմաթիվ հիանալի տարատեսակներ,  
որոնք մինչ այդ հայտնի չէին Հայաստանի և Գով-  
կասի խեցեղեն արտադրության մեջ (տախտ. 62):  
Սրանք զարդանախշվում են խորը, սիմետրիկ,  
ռելիեֆ, փայլեցված ու փորագիր օրնամենտներով,  
սակայն զարդանախշման գլխավոր ու ամենատա-  
րածված մոտիվը ուղղաձիգ կամ հորիզոնական  
կանելուրների խիտ շարքերն էին, որոնք անոթի

մակերեսը դարձնում էին ալիքավոր, լույս ու  
ստվերի խաղով: Թեև մ.թ.ա. IX դարում խեցե-  
գործական արտադրանքի այս տիպերը հարատևում  
են, այնուամենայնիվ նկատվում է մոտիվների  
որոշ անկում Կերամիկայի հասարակ պարզեցված  
ձևերի գերակշռությամբ, որը գլխավորն է մ.թ.ա.  
IX դարի դամբարաններում: Այս տիպի խեցեղենի  
հետ հանդիպում են հավասար չափով, ինչպես  
բրոնզե, այնպես էլ նույնատիպ երկաթե իրեր ու  
առարկաներ: Սկսվում է երկաթի լայն տարած-  
ման դարաշրջանի առաջին փուլը:

## ՈՒՇ ԲՐՈՆՁԵՒԱՐՑԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹՎԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Հայկական լեոնաշխարհի ուշ բրոնզեդարյան հնագիտական օբյեկտների թվագրութունը հաստատվում է խեցեղենի սինխրոնիկ խմբերի համեմատական ուսումնասիրության, ինչպես և մետաղե առարկաների ճիշտ թվագրված հին արևելյան զուգահեռների միջոցով, որոնց բացարձակ հասակը որոշվում է սեպագիր արձանագրութունների և շերտագրական ստույգ դիտողութունների հիման վրա:

Հետաքրքիր է, օրինակ, որ ուշ բրոնզեդարյան մշակույթի I փուլին վերագրվող հարյուրավոր խեցեղեն անոթներ գեներտիկ նմանութուն ունեն միջին բրոնզեդարյան ուշ շրջանի (XVI—XV դդ. մ.թ.ա.) սև փայլեցրած և ինկրուստացված կերամիկայի, ինչպես և անցման ժամանակաշրջանի (մ.թ.ա. XIV դ.) կերամիկական բնորոշ կոմպլեքսների հետ:

Այս խմբի խեցեղենի բազմահարուստ նյութերի հետ Քաղաքենդի, Լճաշենի, Արթիկի, Գեղարոտի դամբարանադաշտերում հանդես են գալիս կենցաղային, տնտեսական, ռազմի, պաշտպանության, պաշտամունքի իրերի ու առարկաների բազմաթիվ տեսակներ և տեղական արտադրության կամ ներմուծված իրերի մի ամբողջ սերիա, որոնք սերտորեն կապվում են Առաջավոր Ասիայի երկրներում տարածված նույնատիպ հնագիտական կոմպլեքսների հետ: Հնագիտական առարկաների նշված կատեգորիան հին Հայաստանը սերտորեն կապում է կուլտուր-պատմական Արևելյան միջավայրի՝ Առաջավոր Ասիայի միջագետքյան (Մարի, Նինվե, Տիլ-Բարսիպ), Ասորիք-պաղեստինյան (Կարթեմիշ, Ուգարիտ, Մեգիդո, Գազա), փոքրասիական (Քոնակ-քեոյ, Չաղար բազար և այլն), իրանական (Թալիշ, Լուրիստան) նշանավոր կենտրոնների հետ: Այսպես, Լճաշենի № 1 դամբարանի բրոնզյա բնորոշ եռաժանիներն իրենց որոշակի

զուգահեռներն ունեն ուգարիտյան իրերի այն կոմպլեքսում, որը թվագրվում է եգիպտական Մերնեպտա փարավոնի արձանագրությամբ (մ.թ.ա. XIII դար), ինչպես և խեթական Ասորիքի՝ Սալմանասար 1-ին թագավորի տիրապետության տարիներով թվագրվող բարձրաքանդակ պատկերների մեջ: Լճաշենի նույն դամբարանի թանկարժեք ոսկյա մանյակներն իրենց ստույգ համադրութուններն են գտնում Մարի քաղաքի վաղ ասուրական ժամանակաշրջանի (մ.թ.ա. XIV դ. վերջ) զարդարանքի առարկաների մեջ: Նույն ձևով են թվագրվում մինիատյուր սակրերի, դաշույնների մի քանի տարատեսակների՝ ձեռքի կացինների, ձիասարքի առարկաների որոշակի տիպերը, որոնք համապատասխանում են Մեգիդոյի, Գազայի, Ուգարիտի, Քոնակ-քեոյի, Թալիշի և ասիական առաջավոր այլ շրջանների մետաղարդյունաբերության արգասիքներին:

Այս բոլոր համադրութունները թույլ են տալիս ուշ բրոնզեդարյան I փուլի դամբարանադաշտերը (Լճաշեն, Գեղարոտ, Քաղաքենդ, Արթիկ և այլն) թվագրել մ.թ.ա. XIII—XII դարերն ընդգրկող ժամանակաշրջանով: Ժամանակագրական այս խմբի հուշարձաններն էլ թվագրության տարբեր երանգներ ու առանձնահատկութուններ են դրսևորում:

Ուշ բրոնզեդարյան հուշարձանների երկրորդ խմբին են պատկանում հնագիտական այն կոմպլեքսները (Ունակ, Լենինական, Գուլուխնո, Խրտանոց, Խաշտարակ և այլն), որոնք վերաբերում են երկաթի նախասկզբնական յուրացման ժամանակաշրջանին: Այս շրջանի դամբարանային ինվենտարներում և բնակատեղիներում հանդես են գալիս առաջին երկաթե իրերը: Ապացուցված է, որ երկաթե գործիքներն ու զենքերը Միջագետքի, Ասորիք-Պաղեստինի, Կիպրոսի, Կրիտի, էգեյան աշխարհի քաղաքակիրթ շրջաններում տա-

րածված են եղել մ.թ.ա. XII—X դարերում ընկած ժամանակաշրջանում: Բնորոշ է, որ նույն շրջանում դիտվում է բրոնզե իրերի արտադրության բանական մեծ աճ, գործիքների, զենքերի, զարդերի նախկին տիպերի կատարելագործում, դամբարանային իրերի կանոնիկ կազմ, արտադրանքի մի շարք նոր տեսակների տարածում և հնացած տիպերի անհետացում: Փոփոխությունների են ենթարկվում նաև խեցեղենի ձևերը, զարդամոտիվները, նրանց կատարման տեխնիկական հնարքները: Նյութական արտադրության զարգացման տեսակետից ուշ բրոնզեդարյան միջին փուլը ընկնում է մ.թ.ա. XIII—X դարերի հուշարձանների միջև և թվագրվում XII դարի վերջերով և XI դարով: Ժամանակագրական այս ֆիքսացիան հաստատվում է նաև կովկասյան նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Ուշ բրոնզեդարյան միջին փուլի դամբարանային կոմպլեքսների մետաղե առարկաներն իրենց կազմով ու տեխնոլոգիայով գրեթե չեն տարբերվում վերջին երրորդ փուլի նյութերից:

Ժամանակագրական ուշ խմբի մեջ են մտնում Արագածի, Տաշիր-ձորագետի, Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և մի շարք այլ շրջանների հնագիտական հուշարձանները, որոնց համար բնորոշ են նախկինում հայտնի բրոնզե իրերի կատարելության հասցված տիպեր (մինիատյուր սակրեր, երկփանիններ, դաշույններ), զենքերի նոր տարա-

տեսակներ, ինչպես և սև փայլեցված կերամիկայի շքեղ արտադրանք՝ փորագիր, ռելիեֆ-վերադի, երկրաշափական, կենդանական ու մարդկային զարդամոտիվներով: Հուշարձանների այս խումբը պատկանում է մ.թ.ա. XI դարի վերջին և գերազանցապես X դարին: Այդպիսի թվագրումը հաստատվում է որոշակի առանձնատիպերի և կավից պատրաստված ճտկավոր կոշիկների մոդելների համեմատական ուսումնասիրությամբ, որոնց համապատասխան զուգահեռներն իրանական հուշարձաններում հաստատապես թվագրվում են XI—X դարերով: Մ.թ.ա. IX դարից սկսած Հայկական բարձրավանդակի տերիտորիայում լայնորեն տարածվում են ասուրա-ուրարտական առանձնատեսակների այլ տիպեր, որոնք չեն առնչվում հենրի հետ: Այսպիսով, ուշ բրոնզեդարյան մշակույթի հուշարձանները բաժանվում են ժամանակագրական երեք մեծ խմբի, որոնք պայմանականորեն կարող են անվանվել լճաշենյան, ոռնակյան և թաքիական: Սրանցից առաջինը թվագրվում է մ.թ.ա. XIII—XII դդ., երկրորդը՝ XI դարով և երրորդը՝ X դարով:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանով ավարտվում է Հայաստանի պատմության և մշակույթի մինչդասակարգային շրջանը, երկիրը թևակոխում է հին-արևելյան պատմակոլտուրական զարգացման, ուրարտական տիրակալության ժամանակաշրջանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌԻՇ ԲՐՈՆՁԵԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի ուշ բրոնզեդարյան հուշարձանների ուսումնասիրության ընթացքում առանձնապես լավ են ուրվագծվում տեղաբնակ էթնիկ միավորումների տնտեսական կյանքում կատարված էական փոփոխությունները: Տնտեսության տարբեր ճյուղերի աննախընթաց զարգացման շնորհիվ, մ.թ.ա. XIII—X դարերի ընթացքում, վերջնականապես ձևավորվում է Հայաստանի բրոնզեդարյան ինքնատիպ, անկրկնելի մշակույթը, որն ընդհանուր է ողջ Անդրկովկասի համար, տարածվում է կովկասյան լեռնաշղթայից հարավ, ընդգրկում Ռիոնի, Քարի, Արաքսի հովիտներն ու ողջ Հայկական լեռնաշխարհը: Առաջավոր Ասիայի ծայրագավառային կուլտուրական այս հզոր օջախն ընդլայնում է իր համակողմանի կուլտուր-տնտեսական և քաղաքական փոխհարաբերությունները մի կողմից՝ Հին Արևելքի և արևելամիջերկրականի քաղաքակիրթ շրջանների, մյուս կողմից՝ Հյուսիսային Կովկասի ցեղերի ու ցեղախմբերի հետ: Երկրի կուլտուր-տնտեսական ծավալում փոխհարաբերությունների հիմքում ընկած էր արտադրողական ուժերի զարգացումը:

Տակավին մ.թ.ա. V հազարամյակում ծայր առած մետաղահանությունն ու մետաղամշակությունը բարձր զարգացման են հասնում Սասնո, Զուլամերկի Ռշտունյաց, Անգեղտան, Տայոց, Գուգարաց, Գեղարքունյաց, Սյունյաց, Արցախի լեռնային շրջաններում, որոնք դառնում են մետաղամշակության հզոր օջախներ: Տիրապետելով պղնձի ձուլման, այլ մետաղների խառնուրդներից բարձրորակ բրոնզեր ստանալու, ոսկեպատելու, փորագրելու, դրվագելու բարդ ու բազմակողմանի եղանակներին ու հնարքներին, ուշ բրոնզեդարյան մետաղագործ վարպետները զենքերի, աշխատանքային գործիքների, զարդերի բարձրարվեստ առարկաների առատ արտադրանք են

տալիս: Հայաստանում արտադրվող զենքերը վաճառահանվում են երկրի ներսում, Կովկասում, պարսկական Քալիշում և այլուր: Ներմուծվում, կամ ներմուծված հին արևելյան տիպի իրերի նմանությամբ պատրաստվում են զենքերի ու պաշտպանության միջոցների բազմաթիվ տարատեսակներ: Հետաքրքիր է, որ լճաշենի, Արթիկի, Քաղաքենդի մինիատյուր սակրերը, դաշույնների տարբեր տեսակները, եռաժանիները և մի խումբ այլ իրեր համապատասխանում են Խատտուշաշի, Թել-Ահմարի, Ուգարիտի նյութերին: Մ.թ.ա. XII դարում սկսվում է երկաթի արտադրական օգտագործման պրոցեսը, որի զարգացումն ընթանում է ճիշտ նույն ձևով, ինչպես Իրանում, Միջագետքում, Փոքր Ասիայում, էգեյան աշխարհում: Բացի զենքերից ու աշխատանքային գործիքներից, մետաղագործ վարպետները պատրաստում են պերճանքի առարկաներ, արվեստի հույակապ նմուշներ՝ սկսած կենդանիների, թռչունների, մարդկանց առանձին ու խմբային արձանիկներից մինչև բրոնզե գոտիները, որոնց արտաքին մակերեսը զարդարվում էր կրոնապաշտամունքային փորագիր պատկերների բարդ կոմպոզիցիաներով:

Մետաղագործության բարձր զարգացած ճյուղերից էր նաև ոսկերչությունը, որը սերտորեն կապված էր գերազանցապես միջագետքյան տրադիցիաների հետ և շումերական, ակկադական, հնդկական զարգատիպերի հետ միասին տալիս էր նաև պերճանքի զարմանահրաշ նմուշներ, որոնք տիպական էին Հայաստանի համար: Բարձր մակարդակի է հասնում նաև խեցեգործությունը: Կավեղեն անոթները պատրաստվում են բացառապես բրուտագործական դուրզնի օգնությամբ և թրծման կատարելագործված վառարաններում: Նրանք ունեն ամենաբազմազան ձևեր ու զարդանախշեր, սև գույն, հարթ, ողորկ, փայլուն մակերես, հա-

ճախ ունի ֆ-վերադիր երկրաչափական, բուսական, կենդանական ու մարդկային պատկերներ: Առանձնապես շքեղ ձևավորում ու հարդարանք ունեն պաշտամունքային մեծ ու փոքր անոթները, կոշկաձև զավաթները և այլն: Մ.թ.ա. XIII—X դդ. խեցեգործական արտադրանքը բաժանվում է ժամանակագրական երեք մեծ խմբերի (լճաշենյան՝ XIII—XII դդ., Ունակյան՝ XI դդ., Ռեդկին-լագերյան և Գանձակ-զարաբաղյան՝ X դ.), որոնք ուշ բրոնզեդարյան մշակույթի ընդհանուր ժամանակագրության հիմքն են կազմում:

Մետաղամշակության, ինչպես և խեցեգործության զարգացումը պայմանավորված էր տրնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության և անասնապահության աճող պահանջներով: Ուշ բրոնզեդարյան բնակատեղիների ու դամբարանադաշտերի պեղումներով հայտնաբերված ոսկրային նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին Հայաստանում վերջնականապես ձևավորվել էր անասնապահության կիսաքոչվորական ձևը: Լեռնային արտավայրերի խելամիտ օգտագործումն անասնապահակ հնարավորություններ էր ստեղծում մանր եղջերավոր անասունների զլխաքանակի ավելացման համար: Երկրի բարձրադիր շրջաններում երկրագործ-անասնապահների հիմնական հարստությունը մանր անասուններն էին, իսկ դաշտավայրային շրջաններում գերակշռում էին խոշոր անասունները, որոնց դերը չափազանց մեծ էր երկրագործության մեջ: Պեղումներով հայտնաբերված ընտանի կենդանիների՝ կովերի, եզների, ոչխարների, այծերի, ձիերի, խոզերի, էջերի մնացորդների ուսումնասիրությունից պարզվում է, որ Սևանի, Մուղան-Ղարաբաղի, Ձորագետ-Թոնդրի և Մերձուրմյան շրջաններում զարգանում էր ցեղային անասնաբուծությունը: Իրենց խոշոր չափերով ու ֆիզիկական գերազանց հատկանիշներով առանձնապես աչքի էին ընկնում նշված շրջաններում աճեցվող ձիերն ու ցուլերը: Երկրի բարձրադիր շրջաններում անասնապահության և երկրագործության կարիքների համար ստեղծվում էին ջրավազանների փոքրիկ սիստեմաներ, դաշտավայրերում փորվում էին առուներ ու առվակներ, սակայն ուշ բրոնզեդարյան Հայաստանում ջրանցքաշինությունը չհասավ միջագետքյան մակարդակի:

Այդուհանդերձ, պատմական նախորդ շրջան-

ների համեմատությամբ, Հայաստանի մասշտաբներով, բարձր զարգացման հասած երկրագործությունը կազմում էր նախնադարյան-համայնական տնտեսության հիմքը: Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիում հայտնաբերված հացահատիկի հսկա կարասներն ու հորերը՝ ցորենի, գարու, կորեկի մնացորդներով, ուրարտական Թեյշեբախնի ամրոցի ամբարներում՝ տեղական բնակչությունից տուրքի ձևով հավաքված ցորենի, գարու, կորեկի, ջուհուրի, սիսեռի, ոսպի, նուան, խաղողի, խնձորի, դեղձի, բանջարաբուստանային կուլտուրաների նշանակալից պաշարները վկայում են այգեգործության, դաշտավարության, բանջարաբուծության բարձր մակարդակը մ.թ.ա. II հազ. վերջերին և առաջին հազարամյակի սկզբներին: Երկրագործության հուժկու վերելքը պայմանավորված էր ոչ միայն երկրի՝ բարենպաստ բնակլիմայական, ֆիզիկա-աշխարհագրական պայմաններով և խոշոր եղջերավոր անասունների ուժի հարածուն ընդլայնվող օգտագործմամբ, այլև գյուղատնտեսական զարգացած գործիքների՝ արտադրամիջոցների բարդ ու բազմակողմանի կոմպլեքսների առկայությամբ, որոնց հիմնական տիպերը հազարամյակների ընթացքում գրեթե էական փոփոխությունների չենթարկվեցին ստրկատիրական և ֆեոդալական հասարակության պայմաններում: Արորն ու զութանը, բրոնզե մանգաղներն ու դանակները, փայտատները, կալսիչները, թիբերը, թիակները, երկփանիններն ու եռափանինները, տարբեր տիպի աղորիքները, սանդերն ու սանդակները կազմում էին երկրագործի աշխատանքային գործիքների հիմնական կոմպլեքսը:

Ուշ բրոնզեդարյան Հայաստանի տնտեսության մեջ, երկրագործության ու անասնապահության վերելքի պայմաններում չափազանց կարեվոր դեր էին կատարում տրանսպորտի միջոցները: Լճաշենի կուրգաններում պահպանվել են բազմապիսի սայլեր՝ բաց կամ կամարաձև ծածկով, երկանիվ ու քառանիվ, ճանապարհորդական և մարտական ճեպընթաց կառքեր, մանկական սայլակներ, մարտակառքերի մետաղե մոդելներ և այլն, որոնց նախատիպերը և զուգահեռները ներկայացված են հին Արևելքի և Անդրկովկասի արվեստի հուշարձաններում, ինչպես և դամբարանային նյութերում (Ուր, Կիշ, Թեփե-Գավրա, Շուրուպպակ, Մարի, Թիլ-Բարսիպ, Ուգարիտ, Դամասիս և այլն):

Տնտեսության նշված ճյուղերի հուժկու վերելքը, սրանց հավելյալ արտադրանքի կուտակումը, աշխատանքի բնական բաժանումը Հայկան լեռնաշխարհի երկրագործական, անասնապահական և մետաղագործական շրջանների միջև նպաստում էին միջցեղային փոխանակությանը, առանց որի հասարակության զարգացումն անհնար կլիներ: Հայաստանը գտնվելով Արևելքի և Արևմուտքի միջև, կապող օղակ էր Առաջավոր Ասիայի, Հյուսիսային Կովկասի և Հարավ-ուսաստանյան տափաստանների միջև: Հայկական լեռնաշխարհի որոշ շրջաններ (Դիարբեքի, Մալաթիա, Վան, Եփրատ-Տիգրիս գետերի վերին հոսանքները գրեթե ողջ II հազարամյակի ընթացքում մտնում էին Միտանիի հին արևելյան հզոր պետության կազմի մեջ, որը ժամանակավորապես իրար էր կապել արևելքի բազմաթիվ երկրներ: Միտանիի քաղաքները մինչև II հազարամյակի վերջը պահպանում էին միջոցորդ առևտրի իրենց դերը: Սրանք Հայաստանի հետ էին կապում փյունիկյան առևտրի խոշոր կենտրոններ Տյուրոսը, Սիդոնը, Մեգիդոն, Ասկալոնը և առանձնապես Ուգարիտը: Տիգրիսի միջին հոսանքում գտնվում էր առևտրավաշխատական մեծ քաղաք Մարին, Եփրատի ափին՝ նշանավոր Կարթեմիշը և ուրիշներ:

Իհարկե, պատահական չէ, որ վերը նշված հնագիտական նյութերը հաճախ լիովին համապատասխանում են Հայաստանում հայտնաբերված իրերին ու առարկաներին: Հայաստանի ուղբրոնզեդարյան զենքերի, զարդերի, պերճանքի առարկաների, ձիասարքի, կնիքների որոշ մասը, անկասկած, ներմուծված է այդ երկրներից: Հայտնի է, որ լճաշենում, Արթիկում, Լեռնային Ղարաբաղում, հեռավոր Օսեթիայում գտնվել են խուրիտական և խեթական կնիքներ, Ղարաբաղում, Առաջաձորի հարուստ դամբարանում՝ ասուրական Ադադնիրարի թագավորի անունը կրող հուշանք և այլն:

Մյուս կողմից, Հայաստանում արտադրվող շատ առարկաների հանդիպում ենք Թալիշում, Լուրիստանում, Հյուսիսային Կովկասի շրջաններում, Դնեպրի ափերին: Ուշագրավ է, որ այդպիսի իրերից շատերը, նույն թվում և ուրարտական ժամանակաշրջանի արգասիքները, հանդիպում են Կազբեկի լանջերին՝ անմիջապես Կովկասյան մեծ լեռնանցքի մոտ և Չեզեմ, Բասկան, Թերեք դետերի հովիտներում՝ լեռնաշղթայից այն

կողմ: Անդրկովկասի տարրեր շրջաններից Հայաստան հասած մետաղագործական արտադրանքներն այստեղից տարածվում էին Փոքր Ասիայի կենտրոնական մարզերում և Կապուտանի հարավային շրջաններում: Տնտեսական այս խոշոր տեղաշարժերը հանգեցրին տոհմա-ցեղային հասարակության վերջնական անկումն հատկանշող հասարակական-քաղաքական երևույթների: Մասնավոր սեփականության և ժառանգական իրավունքի զարգացումը, նահապետական ընտանիքի տրոհումը, տոհմա-ցեղային ավագանու մեկուսացումը, սոցիալ-տնտեսական ներհակությունները դառնում են դասակարգային հասարակության զարգացման որոշակի նախազրյալներ: Մ.թ.ա. XIII—X դդ. Հայաստանի հարավ-արևմտյան մասերում պետական կազմավորման մակարդակի են հասնում ուրարտական ցեղերը, արևելյան մասում Ուղուրի-էտիոնյան և այլ ցեղային միավորումներ, Հայասա երկրում շարունակում է հարատևել պրիմիտիվ պետական կարգը: Մ.թ.ա. XII դարում Փոքր Ասիա են ներխուժում «Մովի ժողովուրդները», նշմարվում է առաջին պրոտո-հայկական մանր իշխանությունների ծագումը: Հայաստանը թևակոխում է ռազմական դեմոկրատիայի վերջին փուլը:

Միջցեղային երկարամյա կռիվները վարելահողերի, արոտավայրերի, ինչպես և քաղաքական գերիշխանության համար հասցնում են տոհմա-ցեղային ավագանու տնտեսական և քաղաքական բացարձակ գերիշխանությանը: Հասարակության այս խավին է ընկնում առյուծի բաժինը լավագույն արոտներից, վարելահողերից, երկրի հարստություններից, ավարառության արդյունքներից ու ձեռք բերված ռազմագերիներից: Ցեղային առաջնորդների տրամադրության տակ են գտնվում մարտական ջոկատներ՝ բաղկացած նիզակակիր ու վահանակիր ռազմիկներից, հետիոտն ու հեծյալ մարտիկներից, մարտակառքի զինվորներից:

Տոհմա-ցեղային ավագանու ներկայացուցիչները խստորեն տարբերվում են շարքային տոհմիկներից իրենց կենցաղով, հագուստեղենով, արդուզարդով, նիստ ու կացով: Սրանց գերեզմաններն անգամ հսկա դամբարանաթմբեր էին, թաղման ընդարձակ սրահներով, որտեղ դիակառքի հետ միասին զետեղում էին արտոնյալների աճյունները՝ արդուզարդով, հանդերձանքի և սպառազինության առաջնակարգ իրերով և

ամեն տեսակ բազմահարուստ նյութերով, որոնք «օգտագործելի» կարող էին թվալ անդրշիրիմյան աշխարհում: Սրանց դամբարանները, թաղման ծեփերն ու արարողությունները նման էին ավելի ուշ շրջանի հայ և սկյութացի թագավորների թաղումներին:

Սրան հակառակ, աղքատիկ ու անպաճույճ էին հասարակության հիմնական խավի՝ շարքային տոհմիկների թաղումները փոքրիկ քարե կամ հիմնահողե դամբարաններում, մի քանի ամենաանհրաժեշտ իրերով, շատ հաճախ երկու-երեք կավանդներով: Խղճուկ էին և սրանց կավակերտ կամ քարից պատրաստած կացարանները:

Արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակի պայմաններում նյութական բարիքների արտադրության կազմակերպումը հնարավոր էր միայն մարդկային մեծ խմբերի միասնական ու համատեղ ջանքերի միջոցով: Այդ պատճառով էլ տակավին մ.թ.ա. III հազարամյակի սկզբներին առաջացած նահապետական ընտանեկան մեծ համայնքը շարունակում էր իր գոյությունը՝ բաղկացած լինելով արյունակից մերձավոր բարեկամների հաջորդական մի քանի սերնդից (3—7), ունենալով լծկան ու կթու անասուններ, արտադրամիջոցներ, այդ թվում նաև ժամանուկավոր օգտագործման իրավունքով ստացած հողաբաժինների անհրաժեշտ միևիմուտ, հանրային արոտավայր: Ընտանեկան նահապետական համայնքը շարունակում էր կատարել հասարակության հիմնական տնտեսական բջիջի դերը: Սակայն խոցիլական ներհակությունները աստիճանաբար մուտք էին գործում նաև ընտանեկան մեծ համայնքի ոլորտները: Նրա տրոհումն առայժմ արտահայտվում էր արտադրական ընդհանուր եկամուտի մասնավոր յուրացման և փոքր ընտանիքների առանձին բնակեցման մեջ:

Այսպիսով, մ.թ.ա. II հազարամյակի վերջերին Հայկական լեռնաշխարհի տոհմացեղային հասարակությունը հասել էր անկման եզրին, ստեղծվել էին բոլոր նախադրյալները դասակարգային պետության առաջացման համար:

Հայկական լեռնաշխարհի բնիկների կյանքը ուշ բրոնզեդարում չէր սահմանափակվում, սակայն, խոցիլ-տնտեսական հարաբերությունների ու արտադրողական ուժերի զարգացման ոլորտներով: Նրանք ապրում էին իրենց իսկ կողմից ստեղծած բնապաշտական գաղափարաբանության, հավատալիքների, պաշտամունքների

բարդ ու հակասական հոգևոր կյանքով, որի բեկորները պահպանվել են հայ ժողովրդական բանահյուսության, հեքիաթների, հանելուկների, առասպելաբանության մեջ: Պաշտամունքային բացատրիկ նշանակություն ունեցող հուշարձանների թվին են պատկանում կանացի քարակոփ կուռքերը, որոնք խորհրդանշում են կին-աստվածուծության, մայր-աստվածուծության՝ պտղաբերության գաղափարը և մարմնավորում տեղաբնակ, երկրագործ-անասնապահ ցեղերի կոմպլեքսային պատկերացումները բուսական ու կենդանական աշխարհի, նույն թվում մարդկային սերնդի վերարտադրության, բարգավաճման, հարատևման վերաբերյալ: Այս գաղափարը տարածված էր ժամանակակից ողջ Արևելքում, Կրետե-միքենյան աշխարհում և այլուր: Պատմական Հայաստանում այս գաղափարների կրողն էր Անահիտ աստվածուհին:

Ուշ բրոնզեդարյան արվեստի պաշտամունքային հուշարձաններում, առանձնապես բրոնզե գծադարձ գոտիների և խեցեղենի ռելիեֆ ու փորագիր պատկերներում արտացոլված են բնիկների պատկերացումները երկրի, երկնի, տիեզերքի մասին: Այս առարկաների վրա երկիրը, երկինքը, ջուրը պատկերվում են երկնային երեք հորիզոնների ձևով ու ներկայացվում ցամաքային և ջրային ռեալ կամ ֆանտաստիկ կենդանիների, թռչունների և երկրաշափական պատկերների միջոցով: Նման պատկերացումների հետքեր պահպանվել են հայ ժողովրդական հանճարեղ էպոսի՝ Սասնա ծռերի բազմազան պատումներում: Առանձնապես լայնորեն են տարածված արևի պաշտամունքին նվիրված իրերը: Սրանք գծադարձ գոտիներ են արևի աստվածությունը ներկայացնող մարդկային կերպարներով ու մարտակառքերով, երբեմն՝ հրեղեն ձիերով, առյուծներով կամ ցուլերով, որոնց վրա կամ կողքին սկավառակաձև, հաճախ ճառագայթավոր սկավառակաձև մարմիններ են գծված: Հանդիպում են նաև արևը խորհրդանշող բրոնզյա ծակոտկեն սկավառակներ փոքրիկ թռչնակների հետ միասին ձուլված և թռչունների փոքրիկ արձանիկներ: Վերջ հիշատակված բրոնզե գոտիների վրա հանդիպում են նաև թռչունների, օձերի, ձկների, ալիքավոր գծերի պատկերներ, որոնք մարմնավորում են ջրի պաշտամունքը: Հին ջրանցքների ու ջրավազանների մոտ հանդիպում են վիշապ-ձկների հսկա քարե արձաններ, որոնք հենց հա-



մոզմամբ պահպանում էին ջրերը: Հայաստանի մի շարք շրջաններում մինչև վերջերս էլ հավատում էին, որ կան անմահություն բերող աղբյուրներ, որոնք պահպանվում են վիշապների ու յոթ գլխանի դեերի կողմից: Մեր նախնիների խոր համոզմամբ ջրերը մոզական նշանակություն ունեին մարդկանց բարօրության համար, շատ աղբյուրներ ու գետեր, նույն թվում Եփրատը, Արաքսը, Տիգրիսը սրբազան էին համարվում:

Երկրի անասնապահ-երկրագործ ցեղերի համար պակաս կարևորություն չունեն կենդանիների, մանավանդ ձիու և եզան պաշտամունքը, որոնց բրոնզյա արձանիկները հաճախ են հանդիպում հնագիտական իրերի կոմպլեքսներում: Երբեմն այսպիսի կենդանիների արձանները գետեղվում էին սրբազան դամբարանների մեջ: Այս կենդանիների խորապես արմատացած ու տարածված պաշտամունքը շարունակվում էր տակավին հեթանոս հայերի մեջ, որոնք արևի աստծուն ձի էին զոհաբերում, իսկ անահտական մեհյաններում բազմացնում էին սրբազան ցուլերի անձեռնմխելի հոտեր: Եզան պաշտամունքը համընդհանուր երևույթ էր Արևելքի բոլոր երկրագործ

ժողովուրդների մոտ: Որոշ ժողովուրդների մոտ այն պահպանվում է և այսօր:

Ուշ բրոնզեդարյան շատ գոտիների և խեցեղեն առարկաների վրա պահպանվել են որսի մագիկ տեսարաններ, բազմաթիվ հետաքրքրաշարժ մանրամասներով: Նրանց վրա պատկերված են լայնալիճ աղեղով ու կապարճով զինված, զգեստավորված ու թռչնագլուխ դիմակ կրող որսորդներ՝ որսի կենդանիների, երկնային լուսատուների, ձկների միջավայրում: Խեցեղեն ամաններից շատերի վրա պատկերված են լեռներն ու աստղազարդ երկինքը, արևի սիմվոլները, որսի պես-պես կենդանիները, նեո ու աղեղով զինված հեծյալ որսորդները և անտառի ոգու կամ որսի աստվածության կերպարը: Հայ ժողովրդական հեքիաթները լի են քաջ որսկանների կերպարներով, որոնք պայքարում են վիշապ օձերի, դեերի, առյուծների ու այլ գիշատիչների դեմ. սասնադյուցազույններն իրենք էլ խաշնարած-որսորդներ էին:

Հասկանալի է, որ հայ արվեստի, հոգևոր ու նյութական կյանքի ակունքները պետք է փնտրել ուրարտական և ուշ բրոնզեդարյան մշակույթի ընդերքում:

КАРТА  
ПАМЯТНИКОВ ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ  
И РАННЕГО ЖЕЛЕЗА АРМЯНСКОГО НАГОРЬЯ  
И ПРИЛЕГАЮЩИХ ОБЛАСТЕЙ

МАСШТАБ  
1:425 000


Автор карты А. А. МАРТИРОСЯН



Условные знаки

- Памятники эпохи поздней бронзы
- Памятники раннежелезной эпохи
- ▤ Урартские крепости, мегалитические надписи
- ▥ Рудные добычи и транзита металла

изготовил Г. Н. Гучикалян



## ПРЕДИСЛОВИЕ

За последние 100 лет в различных областях Армянского нагорья археологическими раскопками выявлены десятки сотен первоклассных археологических памятников эпохи первобытного общества. Эти древние поселения, циклопические крепости, курганы, кромлехи, могильники различных типов со своими своеобразными комплексами изделий древнего производства все более приобретают значение настоящих уникальных первоисточников по истории и культуре родоплеменного строя, в условиях полного отсутствия каких-либо письменных данных.

В перечисленной выше серии памятников своим количеством, разнообразием и своеобразным богатством сильно отличаются древности эпохи поздней бронзы (XIII—X вв. до н. э.), изучение которых способствует воссозданию довольно приближенной исторической схемы периода падения родоплеменной организации, а также выявлению глубоких корней культуры Урартского и раннеармянского государств.

Вслед за первыми археологическими открытиями XIX в., документировавшими наличие культуры поздней бронзы и привлекшими внимание научного мира к Армении и к Кавказу, после установления Советской власти были открыты многочисленные могильники, поселения и крепости указанного периода, изучением которых на протяжении около пяти-

десяти лет занимались Государственный исторический музей Армении, Комитет по охране исторических памятников Армении, Институт истории и литературы Армянской республики, Институт истории АН Армянской ССР, Ереванский государственный университет, Институт археологии и этнографии АН Армянской ССР.

За последнее десятилетие начались и продолжаются раскопки больших археологических комплексов Лчашена (рук. экспедиции А. О. Мнацаканян) и Артика (рук. экспедиции Т. С. Хачатрян), значение которых в проблеме позднебронзовой культуры Кавказа и Передней Азии вряд ли можно недооценивать.

На территории Западной Армении, от Карса до Карина и Орду, также были открыты характерные памятники последней трети II тыс. до н. э. и урартской культуры, которые свидетельствуют о наличии огромного, единого культурного пласта на территории всего Армянского нагорья в эпоху поздней бронзы и раннего железа. Это чрезвычайно важное явление в исторической схеме бронзовой культуры Армении фиксируется также при изучении энеолитических и более ранних стадий развития первобытного общества.

Изучению накопившегося колоссального материала посвящена целая серия крупных и мелких исследований, статей и публика-

ций<sup>1</sup>, в которых рассматриваются вопросы классификации и датировки памятников, общего уровня развития материальной и духовной культуры населявших Армению племен, их хозяйственно-культурные взаимосвязи с окружающими районами древней цивилизации, племенами Кавказа и южно-русских степей.

---

<sup>1</sup> См. список литературы по культуре позднебронзовой эпохи, стр.

Вышеизложенными обстоятельствами вызвана необходимость обобщающих публикаций материалов позднебронзовой эпохи в виде отдельных выпусков «Атласа-корпуса археологических памятников Армении», издаваемого Институтом археологии и этнографии АН Армянской ССР. Настоящий выпуск является первым опытом подобного издания материалов указанного периода с соответствующим историко-археологическим обобщением всех данных, приводимых ниже.

## ПАМЯТНИКИ ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ

### I. ПОСЕЛЕНИЯ И ЖИЛИЩА

Вся территория Армянского нагорья в эпоху поздней бронзы была покрыта густой сетью больших и малых поселений, представлявших собой своеобразное сочетание жилых, хозяйственных и погребальных сооружений, расположенных вокруг крепостенных циклопических крепостей—чрезвычайно характерных архитектурных памятников эпохи бронзы. В различных районах Армянского нагорья, в Арагатской, Ширакской, Ванандской, Каринской и в других долинах, Васпуракане, Ташир-Дзорагете, Джавахке, Трехке, Арцахе и в других многочисленных областях, известны сотни и тысячи подобных памятников.

К сожалению, из великого множества указанных бытовых древностей частичному исследованию подвергнуты лишь некоторые, и то на территории Советской Армении и близлежащих районов Закавказья.

#### *Поселения Айрагатской равнины и Ширака*

В 1896 году известный русский археолог А. А. Ивановский впервые приступил к исследованию поселений позднебронзовой и раннежелезной эпохи на северном подножье Арагата, в районе селения Ташбурун и за его пределами, в южном, юго-восточном направлениях. Обследованные здесь остатки различных жилых и подсобных строений, очень мощных циклопических крепостей принадлежали трем поселениям племени эрикуайцев, оказывавших упорное сопротивление продвижению урартов на север. На основании малочисленного археологического материала поселения эти можно датировать XI—IX вв. до н. э.

В конце IX в. до н. э. на месте одного из этих поселений возник город Менуахинили—основной военно-стратегический аванпост Ванского царства на правом берегу р. Аракс. При более полном обследовании здесь можно было бы обнаружить богатейший средневековый материал, так как в этом районе позднее предполагается армянский город Цолакерт.

Среди левобережных памятников р. Аракс ныне выдвигается на первый план *Мецаморское поселение*, известное по работам Г. Тер-Мовсисяна, Е. А. Байбуртяна, А. А. Мартиросяна, Ж. Д. Хачатряна, А. Р. Израелян, Л. А. Барсегиана. Раскопки крупного масштаба, однако, начались здесь в 1965 г. под руководством К. А. Мкртчяна и Э. В. Ханзадян. Поселение это расположено на двугорбom вулканическом холме у с. Верин Зейва, господствует над равниной, занимает около 4 гектаров площади. Еще в III тыс. до н. э. оно привлекало туземцев своим чудесным расположением на левом берегу р. Мецамор, холодными родниковыми водами, прозрачно-синим озером, прекрасной рощей. Были все условия не только для производственной, но и духовной деятельности человека. Поэтому неудивительно здесь сочетание больших производственных и религиозно-культурных объектов, представленных во всей своей пышности.

В ходе раскопок 1965—1966 гг. на северном участке холма были выявлены внушительные остатки мелких и крупных производственных и жилых сооружений. На гладкой макушке холма и у подножья его сохранились остатки довольно мощных стен циклопической крепости, жилых домов с четкой планировкой и под-

земных погребальных или обитаемых «пещер», высеченных в легко поддающихся лавах вулканического конуса. Большая часть всех вышеуказанных сооружений относится к эпохе поздней бронзы и раннего железа (XIII—VIII вв. до н. э.), ко времени могучего расцвета культуры первобытного общества, когда стало возможным создание очень грамотных систем обогащения металлической руды, с крупными и мелкими резервуарами, с множеством арыков, желобов и других важных деталей. Именно с этой системой связано большое количество «домниц» и прямоугольных плавильных печей, расположенных на северном склоне холма и предназначенных для получения оловянистых, мышьяковистых бронз, металлических и других сплавов, золота, серебра, пастовых и керамических изделий. Все это, разумеется, чрезвычайно интересно в смысле изучения развития производительных сил на закате первобытно-общинного строя и в период возникновения первой государственности.

Не менее интересны, однако, и памятники духовной культуры Мецаморского поселения. Важными элементами этого комплекса являются родники, озеро, роща, открытые святилища с высеченными на скале астрономическими знаками, откуда наблюдали за движением планет, петроглифы и наскальные изображения, различные углубления на поверхности скал для жертвоприношений и возлияний. Совершенно уникально в Армении святилище южного склона Мецамора, находящееся в огромном помещении (60—80 кв. м), состоящее из ряда алтарных возвышений с центральными культовыми очагами и крупномасштабными женскими идолами, которые почитались в качестве богини-матери плодородия. Это наиболее характерный культовый памятник земледельцев, скотоводов и металлургов эпохи бронзы. За пределами поселения Мецамора (с севера) простирался большой могильник, являющийся памятником заупокойного культа. Здесь выявлены интересные комплексы вещей X—VIII вв., в том числе и богатое урартское погребение I четверти VIII в.

*Доурартское поселение Кармир-блур*, являющееся также одним из важных памятников

позднебронзовой Армении, было исследовано А. А. Мартиросяном и В. С. Сорокиным в 1954—1962 гг. Слон этого обширного поселения залегают под развалинами урартского города Тейшебаини (Кармир-блур), на левом берегу р. Раздан, занимают 30—40 гектаров площади и содержат руины жилых, производственных, хозяйственных комплексов, которые примыкали некогда к большой циклопической крепости. В пределах поселения и за чертой располагаются отдельные группы погребений и большой могильник.

В отличие от Мецамора, древности Кармир-блурского поселения относятся только к позднебронзовой и раннежелезной поре (XII—VIII вв. до н. э.) и состоят из очень больших комплексов глинобитных сооружений, находящихся под единой кровлей. Эти комплексы делятся на ряд жилищ, которые имеют, как правило, одно круглое (или многоугольное) и несколько прямоугольных, примыкающих помещений. Характерную картину представляют собой упомянутые круглые жилища, которые снабжены хозяйственными, культовыми очагами, зерновыми колодцами, антропоморфными женскими идолами богини-матери, целой серией бытовых и производственных деталей.

Архитектурные комплексы Кармир-блурского доурартского поселения типичны для поселений Арагатской равнины, их прототипы возникают в IV—III тыс. до н. э. и в различных вариациях и преобразованиях доживают до раннеармянского времени. Детальное исследование строительно-архитектурных особенностей жилых комплексов Кармир-блур показывает, что жилище большой патриархальной семьи (или гердастана) в эпоху поздней бронзы состояло из обособленных мелких ячеек, принадлежавших малым семьям. В нем, таким образом, сочетались принципы общепроизводственного начала гердастана (большие семьи) и локального поселения нескольких кровнородственных групп или семей, пользовавшихся правом общего потребления средств.

Глубокие шурфы, заложенные в различных уголках этого поселения, выявили четыре

строительных горизонта по вертикали, с хронологической протяженностью в четыре столетия. В нижнем горизонте были обнаружены остатки металлургической мастерской с мощными пластами древесных угольков и золы, каменными и глиняными орудиями производства. К числу особенно важных находок в мастерской бронзолитейщика Кармир-блур принадлежат железные болванки, которые указывают на наличие железообрабатывающего ремесла в Армении не позднее середины XII в. до н. э.

Кармир-блурское и Мецаморское поселения Араратской равнины принадлежали обособленным большим группам азайского союза племени, занимавшего в сообщениях урартских царей довольно почетное место.

*Ленинаканское поселение.* В урартских клинообразных надписях VIII в. до н. э. упоминается несколько богатых поселений «страны Эриахи», одно из которых было обнаружено в районе Ленинаканского мясокомбината и частично исследовано дважды экспедицией Института истории культуры под руководством А. Калантара в 1934 г. и экспедицией Института истории АН Армянской ССР под руководством А. Мартиросяна в 1952 г. Поселение расположено на транзитных путях, ведущих из Ширакской равнины в долины Вананда и Арарата, при соседстве огромного могильника с грунтовыми погребениями и «каменными ящиками» XI—VIII вв. до н. э. Наиболее ярким археологическим объектом, обследованным здесь в 1934 г., явилось помещение с остатками бронзолитейного производства и базальтовой массивной формой для литья секиры закавказского типа. Помещение это по праву считается мастерской древнего металлурга. При разведочных работах 1952 г. был выявлен участок жилых построек на западном отсеке поселения. Дома эти имели замечательную сухую кладку циклопического типа, глинобитные, хорошо утрамбованные полы, с мощным зольным слоем обгоревшей кровли и остатками материального производства. К западу от поселения были раскопаны многочисленные «каменные ящики». Яркие комплексы интересных бронзовых изделий бы-

ли выявлены здесь при случайных земляных работах.

*Присеванские поселения.* Крепость-поселение города Камо является одним из выдающихся памятников древней культуры бассейна оз. Севан. Оно расположено на высоком мысу западной части города, называется у местных жителей «Берды Глух» и занимает около 5 гектаров площади. Крепость имела мощную оборонительную ограду с многочисленными контрфорсами, изолированное большое здание цитадели с множеством жилищ в пределах крепости и за ее оградой. Подземный ход крепости, облицованный большими глыбами базальта, ведет к реке Гавар, через которую можно было проехать или пройти по древнему каменному мосту, лежащему ныне в развалинах. В качестве жилья и погребений здесь также использовались разных объемов гроты и пещеры. К обследованию крепости-поселения «Берды Глух» обращались многие археологи, однако наиболее результативными оказались работы Г. А. Микаеляна, установившего наличие культурных горизонтов эпохи бронзы, урартского и раннеармянского времени. Именно здесь сохранилась клинообразная надпись царя Русы I (конец VIII в. до н. э.) о захвате «страны Уеликухи» и постройке города бога Халди. В районе крепости «Берды Глух» расположено несколько менее значительных крепостей и фортификационных сооружений, оборонявших подступы головного укрепления уеликухцев и позднейшего города бога Халди.

*Лчашенское поселение* расположено на каменных возвышенностях южной окраины селения Лчашен, занимает около 55 га площади, является одним из крупнейших поселений, выявленных в Армении Лчашенской экспедицией Института археологии АН Армянской ССР (А. О. Мнацаканян). Конечно, на этой огромной площади определенное место принадлежит остаткам древнебронзовых и среднебронзовых этапов культуры, однако ясно, что археологические памятники позднебронзовой поры занимают здесь господствующее положение, так как именно в этот период Лчашенское поселение являлось резиденцией крупных пле-



менных вождей Киехуни и своим ключевым положением играло весьма важную роль при отражении урартской экспансии. Недаром здесь находится клинообразная надпись знаменитого Аргишти I о захвате города Иштикуни. Достаточно отметить, что ширина оборонительных стен сооружений Лчашена достигает 3,5—4 метров, общая протяженность—5000 метров, мощные цитадели его расположены в восточной и северо-западной частях крепости, на значительной высоте от общего уровня других построек, обладают несколькими десятками контрфорсов, мощных угловых башен и двойным кольцом внешних стен. Эти крепости находятся на расстоянии 200 м друг от друга и разделяются друг от друга неприступным ущельем. Вся Лчашенская крепость, в том числе и цитадели, заняты множеством крупных и мелких жилищ и сооружений подсобного характера. Для жилых комплексов описываемого памятника чрезвычайно характерны дома из трех-четырёх помещений, с многочисленными очагами, деревянными колоннами, коническим перекрытием типа глхатун и другими весьма любопытными деталями. По мнению руководителя экспедиции А. О. Мнацаканяна, эти дома принадлежали большесемейным общинам. Масса жилых домов выявлена также на осушенной территории озера, в восточной окраине Лчашена. Остается еще добавить, что к этой огромной площади приурочен такой же знаменитый могильник с разнотипными очень богатыми захоронениями, которые вряд ли имеют равных среди многих памятников Кавказа и Передней Азии.

## II. ПОГРЕБЕНИЯ И МОГИЛЬНИКИ

